

Ռ. Ն. ՇԱԼՈՒՆՑ

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվի բառային համակարգը հնթակա է անընդհատ փոփոխությունների: Այդ փոփոխություններից մեկն արտահայտվում է համանունական խմբերի քայքայումով և նոր խմբերի առաջացումով: Ինչպես բազմիմաստ բառի իմաստային կառուցվածքի, այնպես էլ համանուն բառերի բառային համակարգի փոփոխությունը օրինաչափ երևույթ է լեզվի համար: Լեզվի պատմության մեջ մշտապես կատարվում են բառի իմաստային սահմանների փոփոխություններ:

Համանուն բառերի առաջացումը բառապաշարի հարստացման աղբյուրներից մեկն է: Ժամանակակից հայերենի համանուն բառերն առաջացել են բազմազան աղբյուրներից: Համանուն բառերի առաջացումն ուսումնասիրելու տեսակետից կարևոր է պարզորոշ կերպով ցույց տալ այն հիմնական աղբյուրները, որոնք ժամանակակից հայերենում առաջ են բերել բազմաթիվ համանուն բառեր: Այս առաջադիր խնդրի լուծման համար կարևոր է յուրաքանչյուր համանունական խմբի առաջացումը դիտելիս հանդես բերել պատմական մոտեցում:

Համանուն բառերի առաջացման աղբյուրների քննությունը դժվարություն չի ներկայացնում միայն այն դեպքում, երբ հայտնի է քննվող բառերի ստուգաբանությունը: Ստուգաբանությունը, որպես ժամանակակից լեզվի բառերի նկատմամբ կիրառվող միակ և հիմնական սկզբունք, որոշ չափով պատմական քննության ճիշտ ըմբռնման հավաստում է: Այս հարցը սերտ կերպով կապվում է լեզվի բառային համակարգի համաժամանակյա և տարաժամանակյա քննության ըմբռնման հետ:

Համանուն բառերի առաջացման հետ կապված տեսական նյութը պետք է խմբավորել իր ամբողջությամբ: Համանուն բառերի ա-

առաջացման աղբյուրների քննությունը կատարելիս պետք է, հնարավորին չափ, այդ առաջացումը դիտել լեզվի զարգացման առանձին շրջաններում:

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՁՈՒԳԱԴԻՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱՊ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում կան բավական թվով համանուններ, որոնք առաջացել են տարբեր բառերի կամ բառաձևերի նույն արտասանության պատահական զուգադիպումից: Դրանք հիմնականում ախ համանուն բառերն են, որոնք առաջացել են տարբեր արմատներից: Այսպիսի համանուն բառերը կարելի է կոչել պատահական զուգադիպությունների հետևանքով առաջացած համանուններ: Պատահական զուգադիպությունների հետևանքով համանուն բառեր են առաջանում երեք եղանակով. ա) երբ արտահայտության պլանում հնչապես զուգադիպում են երկու անկախ բառեր, որոնք առաջացել են տարբեր արմատներից, ինչպես՝ այր₁—տղամարդ, այր₂—քարայր, լալ₁—սուտակ, լալ₂—արտասվել, լալ₃—համր, բ) երբ որևէ բառի հոլովական ձևը հնչապես զուգադիպում է մի այլ բառի ուղիղ ձևի հետ, ինչպես՝ ինձ₁—ընծառյուծ, ինձ₂—ես անձնական դերանվան եղակի թվի տրական և հայցական հոլովի ձևերը, հոբ₁—փորվածք, հոբ₂—հայր բառի եղակի թվի տրական հոլովի ձևը գ) երբ որևէ բայի խոնարհման ձևը հնչապես զուգադիպում է մի այլ բառի ուղիղ ձևի հետ, ինչպես՝ կաբ₁—կարվածք, կաբ₂—կամ պակասավոր բայի սահմանական եղանակի անկատար անցյալի եղակի թվի երրորդ դեմքի բայաձևերը, աբ₁—քաջ, անվախ, աբ₂—գալ բայի եղակի հրամայականի ձևը¹:

Թեև հայերենում կան շատ համանուններ, որոնք առաջացել են պատահական զուգադիպությունների հետևանքով, բայց այժմ այդ եղանակով համանունական նոր խմբեր չեն առաջանում: Այդ բացատրվում է նրանով, որ լեզվի զարգացման ժամանակակից շրջանում նոր արմատներ չեն առաջանում, բացի այդ, գոյականների հոլովման և բայերի խոնարհման ձևերը շատ դանդաղ են փոփոխվում: Պատահական զուգադիպությունների հետևանքով համանուններ

¹ Այստեղ նկատի ունենք մասնակի կամ բառաքերականական համանուններ, երբ համանունական խմբի անդամները համահնչուն են քերականական ոչ բոլոր ձևերում, այլ՝ սոսկ մեկ առանձին ձևում:

րի առաջացման ուղին կարելի է անվանել ներկա ժամանակաշրջանում անաբանաբանական, պասսիվ ուղի:

**ԻՄԱՍՏԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ
ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ**

Համանուն բառերի առաջացման հիմնական աղբյուրներից մեկը միևնույն բառի տարրերի իմաստների հեռացումն է, այսինքն՝ համարմատ համանուն բառերի առաջացման հիմնական աղբյուրներից մեկը բազմիմաստության տրոհումն է:

Բազմիմաստ բառերից համանուն բառերի առաջացումը օրինաչափ երևույթ է բոլոր լեզուների համար: Այս կարևոր հարցին առաջինը ուշադրություն են դարձրել Շ. Բալլին և նրա հետևորդ Ա. Սեշեհայե: Սովետական լեզվաբանության մեջ այս հարցերը ավելի խորացվեցին Վ. Վ. Վինոգրադովի կողմից:

Պատմական իմաստաբանության բնագավառում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ բազմիմաստության, ինչպես և համանուն բառերի առաջացման հիմքում ընկած են իմաստային պրոցեսներ, որոնք պատճառ են դառնում նոր բառերի երևան գալուն: Շատ լեզվաբաններ են անդրադարձել բառի իմաստային կառուցվածքի որակական փոփոխությունների քննությանը, բայց ըստացված արդյունքները դեռևս չի կարելի բավարար համարել: Բառի իմաստների փոփոխությունը հստակ կերպով պետք է սահմանադատել նոր իմաստների առաջացումից: Ուստի համանուն բառերի քննությունը կատարելիս չպետք է շփոթել այդ երկու տարրեր երկվույթները:

Բազմիմաստ բառի տարրերի իմաստների հեռացումը և դրա հետևանքով անկախ բառերի առաջացումը կարող են տեղի ունենալ լեզվական և արտալեզվական պատճառներով: Համանուն բառերի առաջացումը բազմիմաստ բառի իմաստներից հաճախ կանոնավոր բնույթ չի կրում: Եթե իմաստային փոփոխությունների համար լինեին կանոնավոր օրենքներ, եթե այդ փոփոխությունները տեղի ունենային կանոնավոր կերպով, և տարրերի իմաստների միջև գոյություն ունենային կանոնավոր կապեր, ապա այդ դեպքում համանուններ չէին առաջանա:

¹ Ch. Bally. Traité de stylistique française, 1908, p. 61. Ch. Bally. Alb. Séchehayé, Actes du Congrès de linguistique à la Haye, 1929, p. 41.

Ժամանակակից հայերենում կան համանուն բառեր, որոնք առաջացել են լեզվական և արտալեզվական փոփոխությունների հետևանքով: Արտալեզվական պատճառներով համանուն բառերի առաջացումը սովորական երևույթ է: Իրականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ժողովրդի սոցիալական, կենցաղային տեղաշարժերը և շատ այլ պատճառներ կարող են նպաստել այդ երևույթի առաջացմանը: Օրինակ՝ զատիկ₁—Քրիստոսի հարության տոնը և զատիկ₂—միջատ (փոքր միջատ, կարմիր դույնով) բառերն իմաստով այնքան հեռու են, որ թվում է, թե դրանք պետք է ծագած լինեն տարբեր արմատներից: Մինչդեռ պարզվում է, որ երկրորդը ծագել է առաջինից. ժողովուրդն այդպես է կոչել այդ միջատը, որովհետև այն երևան է գալիս զատկի տոների ժամանակ:

Պատահում է, որ համանուն բառերից մեկի առաջացումը կապվում է հասարակական նոր երևույթի կամ հասկացության հետ, եթե վերջինս մուտք է գործում հասարակական կյանքի մեջ: Օրինակ՝ մսուր₁—ախոռ, մսուր₂—մանկամսուր, օղակ₁—փոքր օղ, օղակ₂—կոլտնտեսության ամենափոքր միավորումը, համանուն բառերից երկրորդների առաջացումը կապվում է հասարակական կյանքի նոր հասկացությունների հետ:

Ժամանակակից հայերենում կան շատ համանուն բառեր, որոնք առաջացել են բառիմաստի փոխաբերումով: Այսպես՝ շուֆ բառը գորարարում ուներ մի քանի իմաստ: Ճնոր Հայկազյան բառարանը՝ այդ բառը մեկնում է. «Ստվեր, հովանի», «քող, ծածկոյթ»... Խավարն չէ անձնաւոր, այլ յերկրէն՝ երկնից յետ լուսոյն մեկնելոյ՝ շուֆ անկեալ և ստուերացեալ, շուֆ, քող, ծածկոյթ գլխոյ կամ երեսաց, գլխաշուք. կամ հովանի այլաբանական... Ջայս հովանիս և ծածկոցս կամ շուֆս ի վերայ տապանակի յեկեղեցոջ. շուֆ—պատիւ, փառք. լավ է մարդոյ խնամաբանութեամբ ծառայել անձին, քան անձին շուֆ. եղեալ՝ և հաց մուրանայցէ (ՆՁԲ, հ. II, էջ 492): Ժամանակակից հայերենում շուֆ₁—ստվեր, շվաք և շուֆ₂—փայլ, շքեղություն իմաստների միջև կապը խզված է, և միայն լեզվաբանը կարող է այն կռահել: Ոչ լեզվաբանը շուֆ₁—ստվեր և շուֆ₂—փայլ բառերի միջև կարող է ոչինչ բնահանուր չգտնել: Դրանք հնչյունակազմով նույն և իմաստով միանգամայն տարբեր բառեր են: Ահա և ինքը, արեւի շուֆը (ԴԴ): Հարստութունը, շուֆը. փառքը կենտրոնացած էր արիստոկրատ խավի պալատներում (ՄՇՀ): Կամ հարստութուն₁—կարողություն, ունեցվածք և հարստութուն₂—թագավորական տոհմ բառերը կապվում են բուն հայերեն հարուստ բառի հետ: Սրանք ծագում են

բնիկ հայերեն հարմատից, որի նախնական իմաստը եղել է «զարկել, խվել»։ Հարուստ բառը բազմիմաստ էր. ըստ Հ. Աճառյանի օրինակների, հին մատենագրության մեջ այն ունեւ հետեւյալ իմաստները. «գորեղ, ուժեղ, ավագ, իշխանավոր, ազնվական», «եղկար, երկարատե, շատ, առատ, բազմաթիւ», «ամեծատուն»։ Այս վերջին իմաստները պահպանվել են նաեւ ժամանակակից հայերենում։ Աճառյանը բերում է նման օրինակներ ուրիշ լեզուներից, որոնք կրել են իմաստի նույնպիսի զարգացում։ Օրինակ՝ լատիններենում *opis* նշանակում է ուժ, իշխանություն, պետություն և հարստություն, ինչը Կամ ֆրանսերենում *riche* նշանակում է հարուստ, իսկ նախապէս այն նշանակել է թագավորական, իշխանական։

Ժամանակակից հայերենում հարստությունը—կարողություն և հարստություն—թագավորական տոհմ այլեւս չեն գիտակցվում որպէս բազմիմաստ բառի իմաստներ։ Դրանք միանգամայն անկախ բառեր են. Նրբ ընկերները հարցնում են, թե ինչու չես օգտվում քո հարստությունից ու փառքամ ապրում. ասում էր հարստությունը փչացնում է մարդու սիրտը (ՀԹ)։ Իագիկ Արծրունին էլ հազարացիների հետ էր միացել, Բագրատունյաց հարստությունը բնաշնչելու հույսով (Մ)։

Ունենք ծափ բնաձայնական բառը, որը նշանակում է «ձեռքի ափերը միմյանց խփել՝ ի նշան ողջունի, ուրախության, գոհունակության»։ Այս բառով կազմվել է մի շարք արտահայտություններ, որոնցից մի քանիսն օգտագործվում են ժամանակակից հայերենում, ինչպէս՝ ծափ զարկել, ծափ տալ, ծափ ու ծիծաղ, ծափ ու ծաղիկ և այլն։ Ունենք սրան համանուն ծափ բառը «պուտուկ, հողե աման» իմաստով, որը կազմված է այլ արմատից և ոչինչ ընդհանուր չունի առաջինի հետ։ Սա միջին հայերեն բառ է և հնուց վկայված չէ։ Այս բառից փոխաբերությամբ առաջացել է մի այլ համանուն բառ, որը բույսի անուն է։ Սվ այժմ ծափ հնչյունակազմով ունենք երեք համանուն բառեր, որոնցից առաջինը ծագում է մի այլ արմատից, իսկ երկուսը մեկ արմատից. Բայց դու մենակ ես, մի ձեռքը ծափ չի զարկում (Բ), Թուրքահայաստանում առատորեն սփռված են հետեւյալ ծաղիկները՝ ձնաբեր, մատուտիկ, սյուտ, ծափկոտուկ, ծափ, դարաֆիլ (ՎՓ), Պատերի տակին շարված են մի քանի մանր թանի ծափներ, կնուններ, բյութ, բղուղ, պուլիկներ (ՊՊ)։

Հայերենում ունենք լույծ արմատը (լոյծ), որի հիմնական նշանակությունը հղել է ճալուկ, հեղուկային, հալչուկ, ջրջրկոտ, կա-

կուղ»³։ Այս արմատից է ծագում նաև լուծանել բայը, որը լայն գործածություն ունի գրաբարում և նշանակում էր «քանդել, արձակել»։ Այս բառը գործածվել է բազմաթիվ երկրորդական իմաստներով, որոնցից մի քանիսը պահպանվել են մինչև վերջին ժամանակներս։ Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում այս բառը մեկնրվում է. «1. որպես լուծանել բայի անցյալ կատարյալի հզուկի III դեմքի և եզակի հրամայականի ձևեր. 2. հեղուկ դրոսիկի մեջ ձողող, հոսանքաւ, հալուկ, հալչուկ։ 3. Փոխառ. կակղացած, մեղկացած, բովթացած, մեղկ, 4. լուծութիւն՝ թույլ լինելը, թուլամորթութիւն»⁴։ Ժամանակակից հայերենում շին պահպանվել առաջին և շորորորդ իմաստները, պահպանվել են միայն երկրորդ և երրորդ իմաստները, բայց տեղի է ունեցել նաև մի այլ երևույթ. բառի փոխաբերությամբ գործածված իմաստը պատճառ է դարձել, որ երկու իմաստները ըմբռնվեն որպես երկու անկախ բառեր։ Այժմ լույծ հնչյունակազմով ունենք երկու համանուն բառ. լույծ₁—հեղուկ, հեղուկային և լույծ₂—մեղկ, ցուփ, շվախ։

Բազմիմաստ բառի իմաստների փոփոխության տեսակները շատ են, հետևապես նաև բազմիմաստ բառերից համանունների առաջացման եղանակները։ Ժամանակակից հայերենի համանուն բառերի քննությունը ցույց է տալիս, որ բազմիմաստ բառի իմաստներից համանունների առաջացման հիմնական միջոցներն են.

ա) Բազմիմաստի ընդլայնում. սա այն դեպքն է, երբ բազմիմաստ բառի տարբեր իմաստներից մեկը տարածվում է այլևայլ առարկաների և երևույթների վրա, առանում ավելի ընդարձակ իմաստ և այնուհետև այդ նույն իմաստով կայունանում իբրև անկախ բառ։ Օրինակ՝ նախկինում սուր բառը նշանակել է միայն «հատու», հետագայում ստացել է նաև «սուր» զենքի իմաստը, կայունացել այդ իմաստով, դարձել միանգամայն անկախ բառ, և այժմ ունենք սուր₁—հատու և սուր₂—թուր համանունները։ Մի սուր դանակ ունեյ գրպանումս (ՀԹ), Գոտիից փառշ էր ընկած երկսայրի սուրը (Բ),

Հայերենում ունենք ֆերք արմատը, որը բնիկ հայերեն է և կազմված է *sker, ker* «կտրել» արմատից՝ ք ածականով։ Այդ արմատը առանձին անգործածական է։ Դրանցից առաջացել է *քերթել* բայը, որ նշանակել է կաշին ֆերթել, կաշին ճանել։ Այդ բառի իմաստի զարգացման հետևանքով առաջացել են նաև ֆերթող (բանաստեղծ), ֆերթված (քերթուած) (բանաստեղծություն) բառերը,

3 2. Անտոյան, Արմատական բառարան, հ. III, էջ 250։

4 Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. II, էջ 208։

ինչպես՝ ֆերել բայից ֆերականություն գոյականը: Ներկայումս այս բառերի իմաստային կապերը չեն զգացվում և միայն ստուգաբանության միջոցով գրանք կարող են բացահայտվել: Այժմ գործ են ածվում ֆերել₁—մաշկը հանել և ֆերել₂—բանաստեղծություն հորինել համանուն բայերը, թեև նրկորոգը հնացած է ժամանակակից հայերենում, բայց գործածվում է պասսիվ բառապաշարում: Այդ բառերից են ծագում նաև ֆերված₁—բանաստեղծություն և ֆերված₂—քերվածք համանունները:

բ) Բաղմաստի նեղացում. պատահում է, որ ընդհանուր իմաստ ունեցող բառը ստանում է նաև մասնավոր իմաստ, որն անկախանում է իրրե ինքնուրույն բառ և ընդհանուր իմաստի հետ կազմում համանունական խումբ:

Իմաստի նեղացում է տեղի ունենում այն ժամանակ, երբ ընդհանուր իմաստով գործածվող բառը որևէ մասնագիտության մեջ ստանում է նեղ, մասնագիտական իմաստ: Իրրե օրինակ վերցնենք ծաղիկ₁—բույս և ծաղիկ₂—հիվանդություն բառերը, որոնց համանուն լինելը կասկած չի հարուցում: Մանրթանալով այդ բառերի պատմական զարգացմանը, նկատում ենք, որ նրանց համանունությունը ծագումնաբանորեն տարբեր բառերի պատահական նույնության արդյունք չէ: Երկու բառերն էլ ծագում են հին հայերեն ծաղիկ բառից, որը գրաբարում արդեն բազմիմաստ էր և որի բոլոր իմաստները (թե՛ ուղղակի, և՛ թե փոխաբերական) կապվում էին Շրույսի, ծաղկի» հետ: Հետագայում այն ստանում է նաև Շծաղիկ հիվանդություն» իմաստը, կայունանում է այդ իմաստով և դառնում անկախ, առանձին բառ: Օտար երկրում բուսած մի ծաղիկ չի կարող իր երկրի շունչն ու փառքամությունն ունենալ (ՀԹ), նրանից ծնած միակ ուղիմ մեռավ ծաղիկ հիվանդությունից (Ր): Մաղիկ (բույս) բառից ծագում են նաև այլ համանուններ, ինչպես՝ ծաղկել₁—ծաղկակալել և ծաղկել₂—նկարել, որոնցից երկրորդը առաջացել է առաջինից բառիմաստի նեղացման միջոցով: Տասն ու հինգ գարուն ծաղկում էին ծաղիկները, և Ալմաստը տասն ու հինգ տարի լսում էր սոխակի սիրահարական երգը (Ր), նրանք ոչ միայն գրում, այլև ծաղկում էին գրեր ֆերը (մամուլ):

գ) Բաղմաստի մթագնման և նոր իմաստի առաջացման միջոցով. պատահում է, որ նոր հատկանիշների հայտնաբերման կամ նախկին իմաստի կորստի հետևանքով բառը ստանում է նոր իմաստ, անկախանում այդ իմաստով իրրե առանձին բառ: Այս վերջին իմաստը իր հերթին դառնում է մի նոր համանուն բառի առա-

շացման պատճառով Իբրև օրինակ կարող ենք բերել ղեղծան Հնչյունակազմ ունեցող համանունների առաջացման պատմությունը:

Հայերենում առկա է ղեղ բուն հայերեն բառը, որ ծագում է *dhele* արմատից, Հետաքրքրական է ղեղ բառի իմաստափոխությունը. այս բառը դեռևս V դարից առաջ նշանակում էր խոտ և միշտ գործածվում էր դալար բառի հետ (դալար խոտ): Քանի որ հիվանդությունների բուժումը կատարվում էր խոտով, ուստի ղեղ սկսեց նշանակել առհասարակ բժշկական խոտ և հետո ավելի ընդհանրացավ, նշանակելով ամեն տեսակի ղեղ: Եվ այսպես՝ ղեղ—խոտ իմաստը կորչում է, և ղեղ նշանակում է առհասարակ բուժամիջոց, նաև, դարձան: Վերջինիս հետ կապվում են շատ իմաստներ, որոնք առաջացել են փոխանցման միջոցով, ինչպես՝ թույն, հուռութ, մարմինը օծելու անուշահոտ իրեր, աչքերը քաշելու ծարիր, արեթ և այլն: Իրենց ծագմամբ ղեղ բառի հետ են կապվում նաև դալար, դալուն, դաղձ, դեղին, ղեղձ բառերը: Վերջինս կազմված է ղեղ արմատից և ձ աճականից, և հենց այս բառի իմաստի առաջացումն էլ հետաքրքրում է մեզ: Գեղձ բառի հիմնական իմաստն էր ղեղին, որը հետագայում բուրդովին մթազնվել է: Գեղձ էր կոչվում հենց իր ղեղին գույնի պատճառով: Այստեղ պարզ է դառնում երկու համանուն բառերի ծագման պատմությունը. ղեղծան—ղեղնագույն, ոսկեգույն և ղեղծանջ—ղեղձանիկ թռչունը, որոնք կապվում են ղեղձ բառի հին իմաստի հետ: Վերջինս ավելի շատ օգտագործվում է ժողովրդական լեզվում. Ոչ ոք ձիվանուն չի ցավում, Գոնե դու արի մխիթարե, սիրելի ղեղծան (աշուղ ձիվանի): Այստեղ բառիմաստի մթազնման մեջ կարևոր նշանակություն ունեն բառաձևերի կրած փոփոխությունները: Այդ փոփոխությունները հաճախ մթազնում են բառի կազմությունը և իմաստը, օրինակ՝ ղեղծան բառը կազմված է ղեղ արմատից, ձ՝ աճականից, —ան մասնիկից⁵: Եվ այսպես, առաջացել են միևնույն Հնչյունակազմ ունեցող, բայց իմաստով միանգամայն տարբեր բառեր:

դ) Բառի նոր իմաստի առաջացումը նմանությամբ հետևանքով. ժամանակակից հայերենում ավելի շատ են բազմիմաստ բառերի տարրեր իմաստներից առաջացած այն բառերը, որոնց առաջացումը բացատրվում է նմանությամբ: Դրա լավագույն օրինակներից մեկը բազուկ—թև և բազուկ—ճակնդեղ համանուն բառերի առաջացման պատմությունն է: Այս բառերից երկրորդը առաջացել է առաջինից՝ ըստ նմանության՝ իր երկար թևերի պատճառով:

⁵ Արմատական բառարան, հ. 1, էջ 488:

Թեև բազուկ բառը նակնդեղ իմաստով անկախ է դարձել դեռևս զրարարում, բայց դրանց իմաստային կապը պահպանված էր։ Սկզբում բազուկ էին անվանում շատ բույսերի ցողունները, որոնք երկար էին ու փարթամ։ Այժմ էլ որոշ բարբառներում այդպես են կոչվում շատ բույսեր, որոնք թևի նմանություն ունեն։ ՆՀԲ-ում բազուկ—թև բառի տակ տրվում է նաև այդ իմաստը. «Բազուկ—ուռ, ոստ, բարունակ. ձիւղք տնկոց երկայնաւը իրրև զբազուկս. Չգեն բազուկ որթուն ընդ արհամարհանս... Բազուկ տնկոց... Կամ ողկոյզ կախեալ յոստ արմատոյ. Արմաւենին այն բերէ երկոտասան բազուկ յամենայն ամի, յբազուկ, որպէս անուն ուտելի բանջարոյ, որ և Տերեի նակնդեղի. Վասն ճակնդեղի, որ է բազուկ»⁶։

Հայերենում ունենք ալիք¹— կոհակ, ալիք²—սպիտակ մազ համանուն գոյականները։ Այս բառերը իրենց ծագմամբ կապվում են ալի բնիկ հայ արմատի հետ, որը հնդեվրոպական ծագում ունի⁷։ Դրաբարում այս երկու իմաստներով էլ այդ բառը սովորաբար գործածվում էր հոգնակի թվով։ Երկրորդ բառի ծագման հիմքում ընկած է նմանությունը. հնում ալիք ասելով հասկացել են թե մազերի, թե ջրերի կամ ծովի ալիքները, կոհակները և հորձանքը։ ՆՀԲ-ում այս իմաստները տրված են որպես միևնույն բառի տարբեր իմաստներ. «Կոհակը. մրրկեալ և փրփրեալ ջուր ծովու կամ գետոց» և «Սոյիտակեցեալ հերք ծնօտի արանց»։ Ավելի ուշ այս իմաստները դարձել են անկախ բառերի իմաստներ։ Բացի այդ, ժամանակակից հայերենում ալիք նշանակում է նաև ռադիոալիք։ Այս իմաստը ևս առաջացել է բառիմաստի նեղացմամբ ալիք—կոհակ իմաստից։ Այժմ կարելի է ասել, որ ալիք հնչյունակազմով ունենք երեք համանուն բառ. ալիք—կոհակ, ալիք—սպիտակած մազ, ալիք— էլեկտրամագնիսական շաշտը տարածության մեջ։ Ու կարծես հենց ալիքը ջրի, հառնում է իրեն մեմունջը խորին, էն ոսկեթեփուկ ձրկան բառերին (ՀԹ), ժամանակը բոլորովին սպիտակեցրել էր նրա ալիքը (Բ), Ուրբան էլ գորավոր լինի օտար ռադիոկայանը, գտե՛ք և ամուր բռնե՛ք այն ալիքը, որ հայերեն է թրթռում (ՄԿ)։

Հայերենում ունենք փուլ բառը, որը հնդեվրոպական ծագում ունի (phol ձևից) և նշանակել է «ավերակ, փլած տեղ», «լուսնի լրանալուց հետո հետզհետե նուազիլը», որից էլ առաջացել են ի փուլ գալ, ի փուլ ածել արտահայտությունները, ժամանակակից

⁶ ՆՀԲ, հ. 1, էջ 420։

⁷ Արմատական բառարան, հ. 1, էջ 51։

հայերենում ի նախադիրը ընկել է, և բառը գործածվում է առանց նախդրի: Այս բառի երկրորդ իմաստը (լուսնի լրումից հետո նվազելը) ընդարձակվել է, և ըստ նմանության այդ իմաստով հասկացել են նաև մի անցքի, գործի, երևույթի աստիճանաբար իրար հաջորդող փոփոխությունները և ընթացքի շրջանները: Ներկայիս ըմբռնմամբ այս երկու իմաստների միջև իմաստային կապը խզվել է, և այժմ փուլ հնչյունակազմով ունենք տարբեր բառական իմաստներով երեք անկախ բառեր, որոնք հավասարապես գործածական են գրական լեզվի թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ տարբերակներում: Փուլ₁—փլատակ, փուլ₂—ժամանակաշրջան, փուլ₃—լուսնի փոքրանալը՝ լրումից հետո: Արդյո՞ք ֆանյաց մեղմեցիք դու վիշտ, Քանեաց հոգի՞ն ալ դարձուցիր ցավեր, փուլ, ավեր (ՌՊ): Ձևավորումը կարած ապրանքի ստեղծման շափագանց պատասխանատու փուլն է (ՄՏ): Ժամը 1-ց անց 2 բնային (լուսնի) խավարումը կհասնի առավել մեծ փուլ(ի), երկրի ստվերը կծածկի լուսնի տրամագծի ավելի ֆանի 0,7 մասը (մամուլ):

Փուր₁—փորելը, փորվածք և փուր₂—որովայն համանուն բառերի առաջացման հիմքում ևս ընկած է նմանությունը: Փուր բառը հնում ունեցել է շատ իմաստներ, որոնց մեծ մասը ժամանակակից հայերենի համար հնացած է. «Փուր—ծակ, պարապութին, մէջը փոս տեղ, սին, մէջը ծակ, սնամէջ, պարապ, որովայն, արգանդ, սիրտ, ընդերք (մարդու ներսը իբրև մի մեծ փռուռ ըմբռնելով, «Ընդունարան միջուկ իրաց» (օր. նաւի, սեխի, ամանի), որից փորել, փոս բանալ, խորացնել, բրել, կռել, կոփել, քանդակել»⁸, ժամանակակից հայերենում փուր₁—փորելը, փորվածք և փուր₂—որովայն միավորների միջև իմաստային կապը մթափնվել է, և դրանք միևնույն հնչյունակազմով տարբեր բառեր են. կատարեցին վագերի էտը և այգիների փուրը (մամուլ): Իմ սոված փուրը կերակրեց (Ր):

Ըստ նմանության առաջացել են շատ համանուն բառեր. Ուրինակ՝ ծոց₁—կուրծք, ծոց₂—(աշխարհագրական) ծովածոց, փռսիկ₁—փոքրիկ փոս, այտի վրա ներս ընկած՝ փոսացած մասը, փռսիկ₂—թղթախաղում կարմիր սրտիկ նկարն ունեցող թուղթը, ֆանդակ₁—քարի, փայտի կամ այլ կարծր նյութի վրա փորագրված պատկեր կամ զարդ, ֆանդակ₂—փորագրված փոս, խրամ, անցք համանուն բառերի առաջացման հիմքում ընկած է նմանությունը: Այս բառերից երկրորդներն առաջացել են առաջիններից:

⁸ Արմատական բառարան, հ. VІ, էջ 1276:

6) Ֆունկցիոնալ իմաստափոխության միջոցով. սա այն դեպքերն է, երբ որևէ առարկային կամ երևույթին հատկացվող անվանումը տրվում է նաև մի այլ առարկայի, որը կատարում է համեմատվող առարկայի կամ հատկանիշի դերը: Այս տեսակետից բընորոշ է կանգուն₁—կանգնած, անխախտ և կանգուն₂—երկարության չափ համանուն բառերի առաջացումը: Այս բառերից երկրորդը թեև ժամանակակից հայերենի համար որոշ չափով հնացած է և օգտագործվել է պատմական երկերում, ժողովրդական բանահյուսական ստեղծագործություններում, այնուամենայնիվ, հետաքրքրական է այդ համանունների առաջացման պատմությունը: Կանգ արմատը առանձին անգործածական էր. հին մատենագրության մեջ պահպանվել են —ուն մասնիկով և այդ արմատով ածանցված ձևերը: Օրինակ՝ կանգուն նախապես նշանակել է «ոտքի վրա կանգնած», «հաստատ, որ փուլ չէ եկած», «ուղիղ, անթերի», «քայլելուց դադարած, կանգ առած», որից և առաջացել է կանգնել բայը⁹: Այս բառից է ծագում «կանգուն» չափի միավորը, որից կազմվել և գործածվել են մի շարք բարդություններ, ինչպես՝ եռականգուն, երկկանգուն, կանգունաչափ. կանգունաչափություն և այլն: Հենում գոյություն ունեն կանգունի զանազան տեսակներ, ինչպես՝ հասարակ կանգուն, արհմի կանգուն, սրբազան կանգուն, երկրաչափական կանգուն: Հետ Աճառյանի «Բուն հայկական կանգունը, ինչպես անունից երևում է, պետք էր որ ունենար կանգնած մարդու հասակի երկարությունը»¹⁰ (ընդգծումը մերն է—ՌՇ): Հետաքայում կանգուն—կանգնած, ուղիղ և կանգուն—երկարության չափ իմաստների միջև իմաստային կապերը խզվել են, և դրանք դարձել են անկախ բառ-համանուններ: Կարող է այժմ էլ անցորդը սարի ուտերից տեսնել Քանդված դռների կանգուն սյուները (ՀԹ): Մի ուրիշ տեղ. գետի ափին, ուղղաձիգ տնկված է միապաղաղ մի ֆառածայր մի ֆանի կանգուն բարձրությամբ (Մ):

գ) Համանունների առաջացումը բառի իմաստների բաղաբառային փոխանցումով. պատահում է, որ բառի իմաստները շփոթվում են միմյանց հետ շնորհիվ այն բանի, որ երկուսն էլ կիրառվում են միևնույն իրադրություններում, և հաճախ մեկն օգտագործվում է մյուսի փոխարեն: Արդյունքը լինում է այն, որ միմյանց փոխարեն օգտագործված այդ իմաստներն անկախանում են որպես առանձին

⁹ Նույն տեղում, հ. III, էջ 946:

¹⁰ Նույն տեղում:

բառեր՝ առաջացնում բառ-համանուններ: Օրինակ՝ ժամ արմատը հայերենում կրել է իմաստի ընդարձակ մշակություն: Հ. Աճառյանն իր «Արմատական փառարան»-ում անդրադարձել է այս բառի տարրեր իմաստների զարգացման պատմությանը: Խոսենք միայն այն իմաստների մասին, որոնք մեղ հետաքրքրում են ժամ հնչյունակազմով համանուն բառերի առաջացումը պարզաբանելու տեսակետից: Ժամ նախապես նշանակել է ռմի ժամ, օրվա 1/24 մասը», «օրոշված ժամանակ», «կարգաւորութիւն ժամուց ի պաշտամունս եկեղեցւոյ, ժամասացութիւն»¹¹, «եկեղեցական ժամասացութիւն» իմաստը ծագել է ժամ— ժամանակ բառից: Դրան նպաստել են ժամագիրք, ժամակարգութիւն, ժամաճար, ժամամուտ բառերը, որոնք ծագում են ժամ— ժամանակ իմաստից: Քիչ քանակապես եկեղեցական գործերում գործածելու պատճառաւ,— գրում է Հ. Աճառյանը,— միացել են «եկեղեցի» գաղափարին: Այսպես օրինակ, ժամաճար՝ որ նշանակում է «ժամը՝ ժամանակը զարնող» գործածութեամբ յատկապէս «եկեղեցու ժամը զարնող» նշանակութեամբ մտածուած է թե ժամ նշանակում է «եկեղեցի»¹², Շատ վայրերում եկեղեցի և ժամանակ իմաստները գործ էին անում միմյանց փոխարեն, կամ հետամնաց վայրերում ժամը որոշում էին եկեղեցու արարողութեամբ, ինչպես նաև ժամ ասելով հասկանում էին եկեղեցի: Ժամ— եկեղեցի իմաստը այնքան է կայունանում, որ վերածվում է անկախ բառի և առաջացնում նոր համանունական խումբ:

Բազմիմաստ բառի իմաստների հեռացումը կարելի է դիտել նաև որպես այնպիսի մի երևույթ, որն իր հերթին դառնում է ոչ միայն համանունություն, այլ բազմիմաստության առաջացման աղբյուր: Ուրեմն կարելի է ասել, որ բազմիմաստության տրոհումը նպաստում է բառի իմաստային կառուցվածքի որակական փոփոխությանը, հատկապես բազմիմաստ բառի իմաստների փոփոխությանը: Դիտենք ճշմարիտ բառի բազմիմաստության և դրա հետ կապված համանուն բառերի առաջացումը¹³ (տե՛ս էջ 75):


Ինչպես տեսանք վերը շարադրվածից, բազմազան են բառ-իմաստի փոփոխության պատճառները, այդ իսկ պատճառով դժվար է սահմանել այնպիսի ընդհանրական կանոններ, որոնք ընդ-

¹¹ Նույն տեղում, հ. III, էջ 8:

¹² Նույն տեղում:

¹³ Հենվում ենք Հ. Աճառյանի ստուգաբանության վրա (տե՛ս Արմատական փառարան, հ. IV, էջ 645):

գրրկեն լեզվի զարգացման ընթացքում տեղի ունեցող բոլոր համա-
նուն բառերի իմաստային փոփոխությունները: Այդ բազմազանու-
թյունը մասամբ բխում է նրանից, որ բառերի իմաստային համա-
կարգում ամփոփվում է լեզվի կյանքում տեղի ունեցող յուրաքան-
չյուր փոփոխություն: իմաստային փոփոխությունների բնույթը



Ըստ ՆՀԻ-ի հետագա զարգացումը

Ըստ Մալխասյանցի բառարանի

Ի ճիղմ, մատաղ, փոքր կամ սեղմ, փոքրոգի, սեղմեալ և յանշափս խնայող, փոքր սրտիւ և փակ ձե- ռօք, ազաւ
--

1. Փոքրասիրտ, փոքրոգի, 2. ուշադ, մլատ, ազահող, չնչին, անշան, զուգնարեա, 3. ճահիճ, կանգ- նած, ցեխոտ ցուր
--

Ժամանակակից հայերենում

ձգճիղմ — փոքրոգի, զժուծ ձգճիղմ — կանգնած, լճացած

հաճախ այնքան բարդ է, որ զժվար է լինում որոշել բառի նախկին
իմաստների հարաբերությունը, իմաստային սահմանների անցու-
մը: Նրբեմն էլ բավական չէ որոշել միայն բառի իմաստային սահ-
մանների անցումները: անհրաժեշտ է լինում քննել, թե երբ են
տեղի ունեցել այդ անցումները, ժամանակագրական որ շրջաննե-
րում են կատարվել դրանք:

Մի շարք արմատական համանուններ, որոնք առաջացել են
բազմիմաստ բառի իմաստների տրոհումից, իրենց հերթին առաջ
են բերել որակական փոփոխություններ՝ բազմիմաստ բառի ի-
մաստներում: Նման որակական փոփոխություններից են, օրինակ,
իմաստների նեղացումը, լայնացումը, ոճական նոր երանգների ա-
վելացումը, իմաստների կառուցվածքային սահմանափակումը և
այլն: Բառի իմաստային որակական փոփոխությունները, որոնք

տեղի են ունենում զանազան պատճառներով, հիմնականում առաջանում են լեզվական գործոնների ազդեցության հետևանքով: Այս գործոնները կարող են ազդել բառի իմաստային կառուցվածքի զարգացման ու փոփոխության վրա: Կարող են առաջացնել նաև, ինչպես տեսանք շատ օրինակներում, բառի առանձին իմաստների որակական փոփոխություն, որն իր հերթին կարող է պատճառ դառնալ բազմաստույթյան տրոհման և նոր համանուն բառերի առաջացման:

ԱՌԱՅԱՋՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Ընդհանրապես լեզվի բառակազմական համակարգի նկարագրության դեպքում սովորաբար նախապատվություն են տալիս ավելի տարածված և գործունե կաղապարներին: Ուստի մենք չենք աշխատում առանձնացնել այն բոլոր կաղապարները, որոնցով կազմվել են համանուն բառեր, որոնք սակայն հազվադեպ են գործածվում կամ դուրս են եկել գործածական բառաշերտի շրջանակներից: Մենք բավարարվում ենք ցույց տալով ժամանակակից հայերենի բառակազմական հիմնական կաղապարները, որոնցով առաջացել են համանուն բառեր, երբեմն էլ համանունական խմբեր:

Կարելի է ասել, որ ժամանակակից հայերենի բառակազմության հիմնական տեսակները առաջանում են հետևյալ կաղապարներով.

1) Բարդ բառեր, սրոնք կազմվում են լեզվի՝ երկու կամ ավելի ինքնուրույն տարրերի գումարից (բառ, բառակապակցություն, հիմք).

2) Ածանցավոր կազմություններ, որոնք ստացվում են արմատի և ածանցի կամ արմատի և ածանցների համադրումից.

3) Խառը կազմություններ, որոնք առաջանում են բարդ բառերի և ածանցների համադրումից.

4) Հապավումներ, երբ բարդությունը կազմվում է ոչ թե ամբողջ բառով կամ արմատով, այլ բառից վերցրած պայմանական որևէ մասով (բառերի սկզբնահնչյուններով, սկզբնավանկերով և խառը, երբ հապավումների բաղադրիչները լինում են սկզբնահնչյուններ և վանկեր կամ վանկեր և լրիվ բառեր):

Ժամանակակից հայերենի համանուն բառերի քննությունը ցույց է տալիս, որ բառակազմական այս կաղապարները հավասարապես չեն մասնակցում համանուն բառերի առաջացմանը: 0-

րինակ՝ III տիպի կաղապարով առաջացած համանունական խրմբեր չկան, IV-ով՝ ես: Կան միայն բառերի սկզբնահնչյունների կազմված երկու հապավումներ, որոնք դարձել են տարբեր համանունական խմբերի անդամներ: Բուն—զարմանքի, զայրույթի, վախեցնելու բացականչություն բնաձայնական բառը հնչապես զուգադիպել է այժմ հասարակ զոյականի արժևք ստացած բուն բառին, որը կազմվել է բարձրագույն ուսումնական հաստատություն բառերի սկզբնահնչյուններից: «Ամբողջ գյուղով օրդու կապում «բուն» են անում, դուրս են թափում (շթ), Նթե ձեր երեխան կանգնի մասնագիտության ընտրության շեմին, դուրս երան կուղարկե՞մ մանկավարժական բուն (մամուլ), Փոկ—կաշեգործի, փոկ—ծովաշուն, բառերին համանուն է փոկ հապավումը (փոխադարձ օգնության կոմիտե բառերի սկզբնահնչյուններից), որը, սակայն, ժամանակակից հայերենի համար արդեն հնացած է: Տավարածի տրդան կաշի և փոկ բերեց Դավթի տրեխը կարկատելու (ԱԲ), Թխտտանիների կարգի մեջ են մտնում ջրային կյանքին հարմարված փոկերը (դասագիրք): Փոկի միջոցով մի ֆանի երինջ բերին կով շունեցող խիստ կարիֆալոր ընտանիքներին բաժանելու համար (ԱՍ):

Բառակազմության հետևանքով առաջացած համանուն բառերը քննելիս երևան են գալիս մի շարք առանձնահատկություններ, որոնք բխում են հայերենին հատուկ բառակազմական կաղապարներից: Հայերենը բառակազմական հնարավորություններով հարուստ չեզու է: Բայց համանուն բառերի առաջացումը տեղի է ունենում հիմնականում բառարարդման և բառածանցման միջոցով: Բառարարդման և բառածանցման միջոցով համանուն բառերի հարստացումը կատարվում է հետևյալ եղանակներով.

1) Նույն համանուն բառերի միջոցով. այսինքն՝ համանուն բառերն իրենց հերթին ածանցվում են միևնույն ածանցներով, հեշտությամբ բարդվում են նույն արմատներով, առաջ բերելով համանունական նոր խմբեր:

2) Այլ՝ ոչ համանուն բառերի միջոցով:

1) Համանուն բառերի միջոցով առաջացած նոր համանուններ

Համանուն բառերից նոր համանուն բառեր են կազմվում.

ա) բարդության միջոցով, բ) ածանցման միջոցով:

ա) Բարդության միջոցով նոր համանուն բառեր են կազմվում

երկու հիմնական արմատներից կամ իբրև արմատ դիտակցված լատերի հարադրումից: Այդպիսի համանուն լատերը կազմում են երկանդամ համանունական խմբեր, որոնց անդամներից յուրաքանչյուրն անկախ, ինքնուրույն կազմությամբ բարդ բառ է: Ընդ որում, բարդության առաջին բաղադրիչը համանունական խմբի երկու անդամների համար ընդհանուր է՝ նույն արմատն է, իսկ երկրորդ բաղադրիչները համանուն արմատներ են, Ըստ երկրորդ բաղադրիչների՝ այդ երկու տարբեր համանուն բառերը ձեռք են բերել լատական տարբեր արժեքներ, արտահայտում են տարբեր իմաստներ: Օրինակ՝ բազմանվագ₁—աշատ նվազներ՝ եղանակներ, ուղարկող₂ և բազմանվագ₂—բազմաթիվ անգամ կատարվող՝ կատարված₃ բառերը համանուն բարդ բառեր են, Թռչունները վաղուց արդեն սկսել էին իրենց բազմանվագ երաժշտությունը (ն⁷), Անապատականները օրվա բազմանվագ ժամասացությունից հոգնած, փակվել էին խուցերի մեջ (Մ), Այս բարդ համանուն բառերի համար բարդության առաջին բաղադրիչն ընդհանուր է (բազմ), իսկ երկրորդ բաղադրիչներն անկախ համանուն բառեր են, նվագ₁—նվագաթություն, նվագելը և նվագ₂—անգամ: Անհույս երգեց վերջին նվագ: Արի շաբաշ կյանքիս վախճան (ՀԹ), Սովորել կարող եմ, որովհետև նրանցից շնորհով նվագ չի պահանջվում, այլ դարբնացի վուսի պես թոփեւ (ԱԲ):

Այդպիսի բարդ համանուն բառեր են՝ քրվասեր—թթվեցրած սեր, քրվասեր—թթու սիրող, ծաղկացան—ծաղիկ ցանող, ծաղկացան—(բժշկական) ծաղիկ հիվանդության ցանը մաշկի վրա, ծայրաբաղ—բազաբի կամ ավանի ծայրային թաղամասը, ծայրաբաղ—(գյուղատնտեսական) երբ թաղում են վագերի ծայրերը: Ծանրակալ—ծանրաբազուկ, ծանրակալ—չինվածքով շատ ծանր: Ծանր ու խոշոր քարերից տաշած, հողահարկ—հողի վրա դրված պետական հարկ, հողահարկ—հողածածկ, հողաշեն:

Առաջին բաղադրիչների համանունությամբ կազմված համանուն բարդ բառեր գրեթե չկան: Պատահում են հազվադեպ օրինակներ. այդ դեպքում, սակայն, համանուններից մեկը հնացած է լինում ժամանակակից հայերենի համար: Օրինակ՝ գազաշափ₁—գազահաշվիչ և գազաշափ₂—մի գազ երկարություն ունեցող համանուն բառերից առաջինը որպես տերմին լայն կիրառություն է գտնել մասնագիտական գրականության մեջ, իսկ երկրորդը հնացած է; և հանդիպում ենք միայն հին կենցաղը պատկերող գեղարվեստական ստեղծագործություններում: Մի թույլ սեղմում հերիֆ կլի-

ներ փայտը ձգելու և մի առտինանից դեպի մյուսը մի գաղաչավի տեղ բաց թողնելու (ՎՓ):

բ) Համանուն բառերի ածանցմամբ բառական նոր արժեքներով համանուն բառեր են առաջանում, երբ երկու համանուն բառերին կցվում են միևնույն բառակազմական ածանցները: Որինակ՝—ան ժխտական նախածանցը ժամ—ժամանակ և ժամ:—եկեղեցի, համանուն բառերից կազմել է նոր համանուններ. անժամ—անժամանակ, տարածամ, անժամ₂—առանց եկեղեցու, առանց եկեղեցական արարողության. հմմտ. Բայց ինչպես եղավ, աղագիլ Զորին Չպատաստանց անժամ եկվորին (ՀԻ), Անժամ՝ անպատաստեթ թաղել:

—Ան ժխտական նախածանցը մի շարք ածական անոններ է կերտում համանուն դոյականներից: Այդ նախածանցով կազմված ածանցավոր համանուն բառեր են, օրինակ՝ անսեր—սիրուց դուրկ, առանց սիրո, անսեր—առանց սերի, սերը քաշած. անխաշ—հում, չխաշած, անխաշ—անթթխմոր. անժամ—չծամած, չծամվող, անժամ—առանց ծամելի, ծամեր չունեցող. անհարկ—հարկից (տուրքից) ազատ, անհարկ—անապաստան. անհոտ—անբույր, հոտից զուրկ, անհոտ—ուխարի հոտ չունեցող, (եկեղեցական) ծուխ չունեցող:

—Ական բառակազմական վերջածանցի և մի քանի համանուն դոյականների բաղադրումից առաջացել են նոր համանուն ածականներ, ինչպես՝ դուսակտն—մեծ՝ ականավոր, հանրաճանաչ հեղինակների կողմից ստեղծագործված և դասական (բերականական) թվային կարգ՝ հաջորդականություն, դասավորություն ցույց տվող:

2) Ոչ համանուն բառերի միջոցով առաջացած նոր համանուններ

Ոչ համանուն բառերից նոր համանուններ են առաջանում. ա) բարդության միջոցով, բ) ածանցման միջոցով:

ա) Ոչ համանուն բառերից կազմությամբ բարդ համանուն բառեր են առաջանում այն դեպքերում, երբ բարդության առաջին բաղադրիչը երկուսի համար ընդհանուր նույն արմատն է, երկրորդները կարող են լինել և՛ նույն արմատը, և՛ տարբեր արմատներ, որոնք սակայն, ունեն տարբեր իմաստներ: Այս միջոցով առաջացած համանուն բարդ բառի բաղադրիչները առանձին-առանձին միմյանց նկատմամբ համանունական հարաբերություն չունեն. օրինակ՝ բազմագետ—գետաշատ և բազմագետ₂—բազմաղի-

տակ համանուն բառերի երկրորդ բաղադրիչները ծագումնաբանորեն տարբեր արմատներ են: Այդպես կարելի է բացատրել նաև ականակիր₁—ինքնագնաց՝ ականներով զինված ռադիոսով, ակունանավ և ականակիր₂—խիստ մութ, չափազանց մութ, երբ ոչինչ չի երևում համանուն բառերի արտասանության զուգադիպությունը (այս բառերից երկրորդը թեև բարբառային ծագում ունի, բայց բարձրացել է գրական լեզվի մակարդակին և կիրառվել է մի բանի դասական հեղինակների կողմից): Անգլիական ձովային մինիստրությունը հաղորդել է... էսկադրային ականակրի խորտակման մասին (մամուլ): Արժվային աչքերը հառեց պատմահանից դուրս ականակիր խավարին (ԴԴ): Այդպես է նաև երախակալ₁—սրի կոթ, դաստակ, բռնատեղ և Երախակալ₂—թնդանոթի խողովակի բերանի անցքը փակող հարմարանք, որ խողովակը պաշտպանում է սնձրիվից, կեղտից բարդ բառերի համանունությունը: Թեև այս բառերի համար և՛ առաջին, և՛ երկրորդ բաղադրիչները ծագումնաբանորեն նույն արմատներն են, բայց նրանք առանձին-առանձին համանուն բառեր չեն: Ծագումնաբանորեն նույն արմատներից հարադրված այդ բարդությունները միանգամայն տարբեր իմաստ են արտահայտում: Նրա կշտից ֆարշ էր ընկած երկայն, կեռ թուրը, որի երախակալը զարդարված էր թանկագին ակներով (Բ): Նավաստիները մթնում հանում էին թնդանոթների պղնձե երախակալները և նրանց պողպատյա վողերը դարձնում դեպի Ջմեռային պալատը (ԱԲ): Նման բարդ համանուն բառեր են. կենդանասեր—կենդանի սիրող, կենդանասեր—կենդանուց սերված. ծաղկապատ—(քուսաբանական) ծաղկապատյան, ծաղկապատ—ծաղկառատ, ծաղիկներով պատված. ծաղկազարդ—(եկեղեցական) զատկի նախընթաց կիրակի օրը, արմավենյաց տուն, ծաղկազարդ—ծաղիկներով զարդարված:

Մի քանի դեպքերում համանուն բառերը հնչյունակազմով նույն՝ պարզ և բարդ բառերի պատահական զուգադիպություններ են. օրինակ՝ անել₁—աշխատանք, գործ կատարել և անել₂—ելնելը՝ դուրս գալն անհնար համանուն բառերից առաջինը պարզ բառ է, իսկ երկրորդը՝ բաղադրյալ, և վերջինիս կազմիչների առանձնության գաղափարը գիտակցվում է: Տե՛ր աստված, միթե՞ կարելի է այդպես անել, ասաց օրիորդը անբնական ձայնով (ՆԴ), եվ աղիմ ֆայլեց մութ արահետով, որ անդարձ եղավ ու եղավ անել (ՊՄ): Այդպիսի համանուններից է նաև սարեկ₁—սարյակ, սարեկ₂—սարը (յայլա) բարձրացող՝ գնացող:

բ) Այս խմբի համանունների առաջացման պատճառ կարող է լինել ածանցումը, Այս համանունն բառերը կարող են առաջանալ երկու ձևով. 1) երբ ածանցավոր բառը արտասանությամբ դուրս գալիս է պարզ բառի հետ. 2) երբ ածանցավոր բառը արտասանությամբ դուրս գալիս է այլ ածանցավոր կամ բարդ բառի հետ:

Առաջինի համար որպես օրինակ կարող է ծառայել -ան ժրխտական նախածանցով և շար ածականով կազմված անշար բառը, որն արտասանությամբ զուգադիպում է անշար²— բույսի անվան հետ: Այսինքն՝ անշար¹ ածանցավոր բառը հնչապես զուգադիպել է անշար² բառի հետ, որը ձևաբանորեն չի բաժանվում արմատի և ածանցի¹⁴, նման համանունն բառեր են. անհատ—անձ, անձնավորություն, անհատ—անհատություն. անոթ—աման, անոթ—առանց օդի. հուշիկ—հանդարտ, մեղմ, հուշիկ—վերհուշ, հիշողություն:

Երկրորդ տիպի համանունն բառերը հիմնականում առաջանում են միևնույն բառի կամ արմատի բարդ և ածանցավոր ձևերի հակադրությամբ, ինչպես՝ ազատագիր— փրկագիր, ազատագիր—ազատ կերպով, ազատորեն. կուսագիր (եկեղեցական)— եկեղեցուն տրված նվեր՝ իբրև լույսի (մոմի, ձեթի) դին, լուսագիր—լուսեղեն, լուսավոր. ծանրագիր—թանկարժեք, ծանրագիր—շատ դժվարին, ծանր:

Այս համանունն բառերը միևնույն բառի բարդ և ածանցավոր ձևերն են, որոնց երկրորդ բաղադրիչները մի դեպքում բառ են (դին), իսկ մյուս դեպքում՝ ածանց (-գիր):

ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Հայերենի համանունն բառերի բառակազմական հատկությունների քննությունը ցույց է տալիս, որ բառի իմաստային բնույթը և նրա բառակազմական հատկանիշը շատ դեպքերում կախված են այն բանից, թե որ խոսքի մասին է պատկանում բառը: Հայերենի համանունն բառերի բառակազմական հարաբերության մասին լավ սլատկերացում կազմելու համար բավական չէ միայն սահմանա-

¹⁴ Պարզ կամ արմատական բառերի մեջ մենք ներառում ենք նաև այն համանունն բառերը, որոնք նախկինում ձևաբանորեն բաղադրյալ են եղել, իսկ այժմ չի գիտակցվում դրանց բաղադրյալ լինելը: Օրինակ՝ աղոտ²—անփայլ, ոչ պայծառ բառը, որ այժմ մեզ համար պարզ բառ է, իրականում բաղադրված է՝ աղ+ոտ (ալոտ > ոտ մասնիկով): Դրան համանուն է աղոտ²—աղախառն, աղաթաթախ բառը, որի ածանցավոր լինելը կասկածելի չէ:

փակվել պարզ և բաղադրյալ բառերի քանակային հաշվարկով: Համանուն բառերի ընդհանուր հաշվարկից հետո պետք է դիտել նրանց քանակային հարաբերությունը՝ տարբեր խոսքի մասերի պատկանելու տեսանկյունից և քննել, թե համանունական հարաբերությունները պահպանվո՞ւմ են արդյոք բարդված և աշանկավոր ձևվերում:

Մեր կողմից կատարված քննությունը ցույց տվեց, որ քիչ են այն դեպքերը, երբ համարմատ համանուններն ունենում են միևնույն միավորով (արմատով կամ ածանցով) բաղադրված ձևեր: Այդ բացատրվում է տվյալ բառերի բառակազմական ավելի կամ պակաս ակտիվությամբ: Բայց, ինչպես տեսանք, կան մի քանի բարդ և ածանցավոր համանուն բառեր, որոնք կազմվել են միևնույն բառակազմական միջոցներով և պահպանել են իրենց իմաստային կապերը արմատական բառերի հետ:

Տարարմատ համանուն բառերն ունեն բառակազմական հետևյալ առանձնահատկությունները. համանուններից մեկը սովորաբար ունի իր ածանցավոր և բարդված ձևերը: Օրինակ, այր₁ — տղամարդ, տղամարդ ամուսին և այր₂ — քարայր համանուն բառերից առաջինով կազմվում են մի շարք ածանցավոր և բարդ ձևեր, ինչպես՝ այրաբաղձ, այրաբար, այրադավ, այրաթող, այրական, այրակերպ, այրամեծ, այրատյաց, այրամուլ, այրանալ, այրասեւ, այրասիրություն, այրասպան, այրասպանություն, այրատյացություն, այրաստություն, իսկ այր₃-ով՝ միայն այրաբնակ և այրածե բառերը: Կամ՝ ավի₁ — բուռ և ավի₂ — եզր, սահման համանուն բառերից առաջինով կազմվել է միայն ավիամեջ բարդությունը, իսկ երկրորդով՝ ավագիծ, ավակնօծություն, ավամեծ, ավամուտ ձևերը:

Պատահում են տարարմատ համանուն բառեր, որոնք ոչ հավասար շափով են ակտիվ բառակազմական տեսակետից: Օրինակ՝ դար₁ — հարյուրամյակ և դար₂ — զառիվայր, բարձրություն համանուններից առաջինով ունենք դարագլուխ, դարակես, դարամեջ, դարամուտ, դարասկիզբ, դարավերջ բարդությունները, իսկ երկրորդով՝ դարալանջ, դարաճուս, դարավեժ: Սակայն և՛ համարմատ և՛ տարարմատ համանուն բառերի համար բնորոշն այն է, որ համանունական խմբի երկու անդամներն էլ բառակազմական տեսակետից մեծ մասամբ ակտիվ են, սակայն նրանցից մեկը համեմատաբար ավելի շատ բառարանային նոր միավորներ է կազմում բարդության և ածանցման միջոցով, քան մյուսը (հմմտ. աղեբս₁ — աղաշանք, պաղա-

տանք, աղերս₂—կույ, անսուգել₁—անպատվել, անսուգել₂—առանց արգելքի, դաս₁—խավ, դաս₂—ուսումնառություն)¹⁵,

Համանուն բառերի (և՛ համարմատ, և՛ տարարմատ) բառակազմական հարաբերությունը և նրանց տարբեր խոսքի մասերի պատկանելի կարելի է ցույց տալ հետևյալ աղյուսակով.

Ածանցման և բարդության հետևանքով առաջացած համանուն բառեր						Պարզ բառեր
գոյական	ստական	թվական	բայ	դերանուն	չթվորոշ խոսքի մասեր	
370	190	3	130	0	30	720

Ինչպես երևում է աղյուսակից, ժամանակակից հայերենում արմատական համանուն բառերն ավելի շատ են, քան բառակազմության միջոցով առաջացածները (թեև, իհարկե, տարբերությունը այնքան էլ մեծ չէ)։ Բառակազմության հետևանքով առաջացած համանուն բառերի մեծ մասը պատկանում է գոյականի քերականական կարգին։ Ըստ քանակի ածականը 11 տեղում է, իսկ բայը՝ 111։ Բառակազմության հետևանքով առաջացած՝ մյուս խոսքի մասերին պատկանող համանուն բառերը շնչին քանակ են կազմում։

Համանուն բառերից մեկի բառակազմական տեսակետից ավելի ակտիվ, իսկ մյուսի ոչ ակտիվ լինելը բացատրվում է ոչ միայն այդ բառերի՝ տարբեր խոսքի մասերի պատկանելիությամբ և իմաստային առանձնահատկությամբ, այլև նրանով, թե լեզվի պատմության ընթացքում որքանով են դրանք զործածական եղել և որքան զործածական են ժամանակակից հայերենի բառային համակարգում։

Այժմ դիտենք հայերենի համանուն բառերի ուրիշ այլ հատկանիշներ։ Հայտնի է, որ ընդհանրապես համանուններ են լինում մեծիմաստ բառերը։ Ուսումնասիրությունները պարզում են, որ այդպես է օրինակ անգլերենում և մի շարք այլ լեզուներում¹⁶։ Մեր կողմից կատարված հաշվումները ցույց տվեցին, որ հայերենում ևս համանուն բառերն ավելի շատ մեծիմաստ են, քան երկիմաստ և բազմի-

¹⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 39, 77, 473։

¹⁶ В. П. Конецкая, Характеристика лексических омонимов-слов, генетически связанных, и пути их образования в английском языке. в сб. «Исследования по английской лексикологии», М., 1961.

մաստ: Ահա այդ հաշվումների արդյունքները. 1) մենիմաստ համանուն բառերը կազմում են ամբողջ համանուն բառերի 67%-ը, 2) երկիմաստ համանուն բառերը՝ 19%-ը, 3) երկուսից ավելի իմաստներ ունեցող համանուն բառերը՝ 14%-ը:

Հետաքրքրական է նաև, թե ինչ հարաբերություն ունեն համանուն բառերը վանկերի քանակի տեսակետից:

Ժամանակակից հայերենի համանուն բառերի վանկերի քանակային տվյալներն ավելի լավ պատկերացնելու համար տեղադրենք դրանք համապատասխան աղյուսակում:

վանկերի քանակը	Համանունական բառերի քանակը	Համանուն բառերի քանակը՝ առկունքով
Միավանկ	361	39,4%
Երկվանկ	288	30,9%
Մեկուկես կամ զառանգական	13	1,6%
Նույնական	118	16,4%
Բազմական	19	2,7%

Ինչպես երևում է աղյուսակից, հայերենում միավանկ և երկվանկ բառերը դրեթե հավասար քանակությամբ համանունական խմբեր են կազմում: Թեև հայերենը հարուստ է երկար բառերով, բայց եռավանկ, մանավանդ երեքից ավելի վանկ ունեցող համանուն բառերը փոքր քանակությամբ են կազմում: Դա ցույց է տալիս, որ հայերենում ևս ավելի շատ համանուններ են կազմվում կարճ բառերից:

Հնչյունական փոփոխությունների ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Համանուն բառեր են առաջանում նաև հնչյունական կազմի փոփոխությունների հետևանքով: Այդ ճանապարհով համանուն բառերի առաջացումը օրինաչափ երևույթ է, սակայն տարբեր լեզուներում դրանք տարբեր բնույթ ունեն և կապվում են տվյալ լեզվի հնչյունական օրինաչափությունների հետ:

Հայերենը հարուստ չէ այս կարգի համանուններով: Բայց կան մի քանի համանուն բառեր, որոնց առաջացման պատմությունը հետաքրքրական է վերոհիշյալ հարցի լուսաբանման տեսանկյունից:

Համանուն բառերի հնչյունների հետ կապված վերլուծություն-

ները հիմնականում հենվում են բառական միավորների արտասանության վրա: Քննության ժամանակ պետք է հաշվի առնել ոչ թե տառերը, այլ հնչյունները:

Հնչյունական փոփոխության հետևանքով առաջացած համանուն բառերի քննության համար անհրաժեշտ է որոշել հին՝ նախագրաբարյան և գրաբարյան շրջանի բառերի արտասանությունը և համեմատել դրանք ժամանակակից հայերենի բառերի արտասանության հետ: Սակայն դա հնարավոր չէ հետևյալ պատճառներով.

1) Նախագրաբարյան շրջանի բառապաշարի մասին ունենք կցկտուր տեղեկություններ, իսկ արտասանության մասին չունենք ոչ մի պատկերացում¹⁷:

2) Գրաբար մեզ ավանդվել է սոսկ մատենագրության միջոցով: Մատենագրության մեջ կան բավական թվով փոխառյալ բառեր (որոնցից մի քանիսը կան նաև համանուն բառերի շարքում), որոնք գործածվել են ուղղակի տառադարձությամբ: Սակայն մենք չգիտենք, թե այդ բառերը գործածվե՞լ են արդյոք բանավոր խոսքում, կամ եթե գործածվել են, ինչպե՞ս են արտասանվել:

3) Հինգերորդ դարից մեզ չի հասել ոչ մի ձեռագիր: Հետագա շրջանի ձեռագրերի մեջ կան բառեր, որոնք առաջացել են պատմական հնչյունափոխության հետևանքով: Այդ բառերը սխալ պատկերացում են տալիս V դարի մեսրոպյան հայերենի շատ բառերի գրության և արտասանության մասին:

4) Գրաբար մեռած լեզու է: Նրա հնչյունական համակարգի արտասանական և ձայնային ուսումնասիրությունը. ինչպես յուրաքանչյուր մեռած լեզվի հնչյունախոսության ուսումնասիրությունը, մոտավոր է:

Այնուամենայնիվ, այս հարցի ուսումնասիրությունը որոշ չափով հեշտանում է այն տեսակետից, որ մենք հիմք ենք ընդունում, որ գրաբարում գրությունը համապատասխանել է արտասանությանը, հետևապես ուսումնասիրության ընթացքում տառն ու հնչյունը կարելի է նույնացնել:

Ժամանակակից հայերենում կան համանուն բառեր, որոնք առաջացել են ընդհանուր պատմական և փոխազդեցական հնչյունափոխության միջոցով:

¹⁷ Օրինակ, համոզված չենք թե ք. դ. պ. ձ. ջ տառերի դրաբարյան շրջանի նորմավորված արտասանությունը ինչպիսին է եղել. առտասանվել են շնչեղ, թե ոչ շնչեղ:

1) «Գաղափարական հնչյունափոխության հետևանքով առաջացած համաճարտական»

ա) Երկրորդականների և բաղաձայնների փոփոխության հետևանքով առաջացած համաճարտականներ

է-ն հնում երկրորդական արտասանություն է ունեցել, ժամանակի ընթացքում պարզվել է, և այժմ բոլոր դիրքերում արտասանվում է որպես պարզ ձայնավոր։ Այսինքն՝ է տառի համապատասխան հնչյունը երկրորդական է եղել, արտասանվել է էյ (ei) և միանգամայն տարբերվել է և ձայնավորի արտասանությունից¹⁸, է>ն հնչյունական փոփոխության հետևանքով մի քանի բառեր դարձել են համանուն, Օրինակ՝ խեթ—խոժոռ, խեթ—խեթական ցեղին պատկանող անհատ. գեթ—շաղ, գեթ—բարձր, ի վեր. սեթ—զգացմունք, սեթ—կաթի սերուցքը. հեզ—խեղճ, թշվառ, հեզ—վանկ, շունչ։

Այս բառերը, սակայն գրաբարում համանուն չեն եղել, քանի որ արտասանությամբ տարբերվել են. առաջինները արտասանվել են էյ-ով (գրվել է է-ով)։

է>ն հնչյունական փոփոխությամբ է բացատրվում նաև ամեն₁—բոլորը, ամենայն և ամեն₂ (եկեղեցական) ճշմարիտ է, այդպես է տարբեր բառերի համահնչյունությունը։ Առաջինը բնիկ հայերեն, իսկ երկրորդը երբայական բառ է, որ փոխառությամբ տարածվել է բոլոր քրիստոնեական և մահմեդական ժողովուրդների մեջ։ Բնական այդ բառի հիմնական ձևը եղել է ամեն, բայց V դ. այդ բառը գրվում էր ամեն։ Հետագայում է>ն հնչյունափոխությամբ այդ բառերը դառնում են համահնչյուն։

Գրաբարի առ երկրորդական բաղաձայններից առաջ դարձել է ո, որ ժամանակակից հայերենում տառադարձվում է նաև ո-ով։ Առ երկրորդական պարզման հետևանքով (XI դ. արդեն հնչվում էր որպես ո) գրաբարի հատ—ոչխարի հոտ (որ արտասանվում էր առ) և հոտ—բուրմունք բառերը դարձել են համանուն բառեր։ Այդ բանից առդեն փլավի հոտ չի փչում... (ՆԴ)։ Դեպի իր գիշերային օրեվանն է գնում գառների ցրված մի հոտ (ՆԴ)։

Ոյ երկրորդական պատմական հնչյունափոխությամբ դարձել է ու։ Ոյ>ու հնչյունափոխությունը շատ հին է. այն շարունակվել է նաև գրաբարում։ Հնչյունափոխական այդ երևույթը պատճառ է դարձել հետևյալ երեք տարբեր բառերի համահնչյունությանը. հայե-

¹⁸ Մանրամասն տե՛ս է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. I, գ. Ա, էջ 38։

յինում կա պուտ բառը, որ նշանակում է խալ, մարմնի վրա բնական կետ, նշան: Բնիկ հայերեն բառ է: Ունենք նաև պուտ—կաթիլ, հեղուկի փոքր բանակություն, որը հետին հայերեն բառ է և գալիս է ժողովրդական լեզվից: Նույն հնչյունակազմն ունի նաև պուտ (բուսաբանական)—բույս, ծաղիկ բառը, որն բուս Աճառյանի առաջացել է ոչ>ու հնչյունափոխությամբ:

բ) Բառասկզբի չ կիսաձայնի փոփոխության և բառավերջի և բաղաձայնի անկման հետևանքով առաջացած համանուններ

Յ կիսաձայնը մեր դրական լեզվում բառասկզբում փոխվել է հ-ի, որի հետևանքով յարկ—տան հարկ, բառը արտասանությամբ նույնացել է հարկ—տուրք և հարկ—կարիք, ստիպմունք բառերին (վերջիններս ծագում են նույն արմատից): Այս բառերին համահնչուն է նաև հարկ—պաշտոնական հացկերույթ, հարկինք բառը, որը ժողովրդական ծագում ունի և զործածվել է ժողովրդական բանահյուսության մեջ: Եվ այժմ հարկ հնչյունակազմով ունենք չորս համանուն բառ:

Յ>հ հնչյունափոխության հետ են կապվում նաև հույլ₁—ծույլ₁, անփութ (դրաբարում՝ յսլ), հույլ₂—խումբ, բազմություն, հույլ₃—ծփանք, հույլունք (զրաբարում՝ յսլզ), հույլ₄—բույսերի մեջ գտնվող մածուցիկ սննդարար նյութ, բառերի արտասանության նույնությունը: Այս բառերի համահնչունությանը նպաստել է նաև ոչ>ու հնչյունափոխությունը:

Գրաբարում եղել են մի շարք բառեր (որոնց շարքում՝ շատ բայանուններ), որոնք վերջավորվել են և արմատական բաղաձայնով և նրան նախորդող մի այլ բաղաձայնով: Թեև այդ բառերը համարվել են միավանկ բառեր, բայց դրանց վերջում արտասանվել է նաև դադտնավանկը: Բառավերջի և հնչյունի անկման հետևանքով այդ բառերը հնչյունապես զուգադիպել են այլ բառերի հետ: Օրինակ՝ վազ₁—վազք և վազ₂—խաղողի որթ, համանուն բառերի արտասանությունը, թվում է, թե պետք է պատահական զուգադիպություն համարել, մինչդեռ բնությունը ցույց է տալիս, որ դրանք հետո են դարձել համանուններ: Ըստ Հ. Աճառյանի վազ—խաղողի ուռ բառը կազմվել է վազեյ—ցատկել, դուրս ցատկել բայից: Բայց վազ—խաղողի որթ բառը զործածական է եղել վազն ձևով, որի վերջին յ բաղաձայնը ընկել է եզակի թվի ուղղական հոլովում և այն արտասանությամբ զուգադիպել է վազ—վազք բառի հետ: Ցատկելու խաղ էր, թե վազ մի ոտքով—Տոբն էր միշտ հաղթում, իսկ նրան ոչով (ՂԱ), խաղողի վազը բազմամյա բույս լինելով. շատ երկար տարի—

ներ է զբաղեցնում հողը (ԳԳԱ)։ Այդպես են առաջացել նաև կարի—
սննդամթերք և կաթ—կաթիլ, պուտ համանուն բառերը։ Այս բա-
ռերը նախկինում համանուն չեն եղել, որովհետև առաջինը ունեցել
է կաթն ձևը, Բառավերջին և բաղաձայնի անկամար դրանք դարձել
են համանուն բառեր, Երբ կովերը տուն են գալիս, կաթը ցզի նման
կաթկթում է ծաղիկների վրա... (ԱԲ), Երկու կաթ արցունք
առնւյշ աչքերիդ, կլիեն սփռփաւք, հոգյակ ընկերիդ (ՀՀ), Կամ
ուրդ—ճիճու և ուրբ—վազ, խաղողի որթ բառերը զրաբարում ունեցել
են տարբեր արտասանութիւն, քանի որ առաջինը եղել է ուրդն ձևով,
Հետագայում և-ն ընկել է, դ-ն էլ արտասանվել է ք՝ դ > ք հնչյունա-
կան օրենքի համաձայն, այսինքն՝ ձայնորդից հետո տեղի է ունե-
ցել ձայնեղ պայթականի ձայնային տարրի թուլացում, և այդ բա-
ռերը վերածվել են համանունների, Սարյակն էլ կտուցով ուրդ է բե-
րում նտերին է տալիս, նրա վեռուներն էլ փայլ ունեն, բայց սար-
յակը թռնիւ չի տեսել (ԱԲ), Խաղողի ուրթը բարձրանում է պատերի
վրա և կրկին իջնում պարտեզ (ՎԽ),

2) Փոխազդեցական հնչյունական փոփոխություններն առաջա-
նում են բառի կազմում գտնվող հնչյունների փոխադարձ ազդեցու-
թյամբ։ Այդ հնչյունական փոփոխությունները կապվում են արտա-
սանական փոփոխության հետ։ Հայերենում կան մի քանի համա-
նուն բառեր, որոնց համանունութիւնը բացատրվում է բառի կազ-
մում եղած հնչյունների փոխադարձ ազդեցութեամբ։ Այդ բառերը
քանակով քիչ են։ Հնչյունական փոփոխությունները հանդես են գա-
լիս միայն համանուններից մեկի կազմում, սահմանափակվում են
միայն մեկ օրինակում և ընդհանուր բնույթ չեն կրում։ Օրինակ՝ առ-
նմանութեամբ է բացատրվում խաբխի—պատիճ, պարկուճ (բուսե-
րի) և խաբխի—լորձունք բառերի համահնչունութիւնը։ Այս բառե-
րից առաջինը նախապես ունեցել է խաբկ ձևը, Բառասկզբի շփա-
կան խուլ իս բաղաձայնի ազդեցութեամբ բառավերջի խուլ կ բաղա-
ձայնը ևս դարձել է իս, այսինքն՝ տեղի է ունեցել լիակատար
առնմանութիւն, որի հետևանքով այդ բառերը դարձել են համա-
նուն բառեր։ Իսկույն մտաւ իր հին խաբխի մեջ (ՀԹ)։ Հիվանդի
խաբխը ընկնում է նրա ձեռքի, սպիտակեղենի և հագուստի վրա
(դասագիրք)։

Մի երկու համանուն բառեր են առաջացել բառի կազմում եղած
բաղաձայն հնչյունների կորուստի հետևանքով։ Օրինակ՝ ր հնչյունի
կորուստով է բացատրվում պահ₁—ակնթարթ, վայրկյան և պահ₂—
ծով բառերի համանունութիւնը (վերջինս պահել բայի արմատն է

և գործածվում է նաև մի շարք հարադրություններում), Այս բառերից
 երկրորդի հնագույն ձևը եղել է պարհ: V դարի հայերենում հանդի-
 պում ենք նաև պարհճ ձևը, որը նշանակում է պահճ պասս»։ Ա-
 վանգված են նաև պարհեսցէ, պարհեսաց ձևերը։ Այս բառերին հա-
 մահնչուն է նաև պահճ—զարմանքի բացականչություն. հետևապես
 պահ հնչյունակազմով ժամանակակից հայերենում ունենք երեք
 համանուն բառ։ Նույնիսկ եղավ պահ, որ ուզեց մտնել ինքնու-
 ղույնությամբ գգալ, բե իր մոտ նստած է ոչ թե Արամը, այլ ու-
 դին... (Վհ)։ Պահ, ծոմ, անհուն գիշերներ, մշտական աղոթք... Մի
 խոսքով կատարյալ անձնուրացություն (Բ)։ Պահ, քո տունը չը-
 փանգվի, ծափ տվին ու ծիծաղեցին մի ֆանի գյուղացի (ՀԹ)։
 Քաշ—կշիռ, ծանրություն և ֆաշշ—շարականի երաժշտական
 խաղերից մեկը և սղագրության նշան համանուն բառերից վերջինս
 ունեցել է ֆաշշ ձևը։ Բառավերջի շ շփականից առաջ ր-ն ընկել է,
 և այդ բառերը դարձել են համանուն։

Փոխառությունների միջոցով առաջացած համանուններ

Փոխառությունները, սովորաբար, անմիջականորեն կապվում
 են ժողովրդի զարգացման և կուլտուրական մակարդակի հետ։ Ընդ-
 հանրապես փոխառվում են այն բառերն ու տերմինները, որոնց ի-
 մաստներն արդեն ըմբռնվում են տվյալ ժողովրդի կողմից։

Հայ ժողովուրդը միշտ էլ սերտ հարաբերությունների մեջ է ե-
 ղել հարևան ժողովուրդների հետ։ Դա ազդեցություն է թողել հա-
 յոց լեզվի բառային կազմի հարստացման վրա. մեր լեզվում ա-
 վելացել են նոր բառեր, որոնք ներթափանցել են փոխառություն-
 ների և բառապատճենումների ձևով։ Այդ բառերի զգալի մասը
 մտնում է հայերենի բառային հիմնական կազմի մեջ։

Հայերենը իր զարգացման տարբեր շրջաններում փոխառու-
 թյուններ է կատարել նաև ռուսերենից և եվրոպական այլ լեզուներ-
 րից։ Ռուսերենի միջոցով հայերենին (և Սովետական Միության այլ
 ազգերի լեզուներին) անցած միջազգային բառերը տարբերվում են
 նախասովետական շրջանում փոխառված օտար բառերից։ Իրենց
 արտահայտած իմաստներով այդ բառերը կապվում են մարքսիս-
 տական գաղափարախոսության, հեղափոխական շարժման, հասա-
 րակական կյանքում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական
 իրավիճակի, սոցիալիստական հասարակարգի կառուցման հետ։

Որոշ բառեր էլ կրել են իմաստային փոփոխություններ՝ կապված մեր պայմանների հետ և առաջ բերել համանունական խմբեր։ Օրինակ՝ պիոներ բառը XVIII դ. ֆրանսերենում ուներ առաջնական ճանապարհ պատրաստող բանվոր» իմաստը։ Ամերիկայի հայտնագործումից հետո պիոներ էին անվանում առաջին ճանապարհաշինարարները Ամերիկայում»։ Դարավերջին այդ բառը իմաստային ընդարձակման շնորհիվ նշանակեց նաև ընդհանրապես «նոր դործ սկսող»։ Սովետական շրջանում պիոներ-ը իմաստի նեղացմամբ նշանակեց «պատանեկան հասարակական կազմակերպության անդամ» և անկախացավ այդ իմաստով։ Այժմ նույն հնչյունական ձևավորումով ունենք երկու համանուն բառ. պիոներ₁—առաջին անգամ նոր՝ շհետազոտված բնագավառ ոտք դնող և նոր ուղիներ բացող մարդ, պիոներ₂—մանկական կոմունիստական պիոներական կազմակերպության անդամ։ Մենք մինչև հոգու խորքը զարմացած էինք նոր կյանքի պիոների հետ ունեցած մեր հանդիպումից (մամուլ)։ Տակին պիոներների շտաբն է... (ԱՔ)։

Ջանազան լեզուներից փոխառված շատ բառեր դարձել են համանունական խմբի անդամներ կամ կազմել համանունական նոր խմբեր։ Համանուն բառերի առաջացման այս ուղին ևս կարելի է դասել համանունների առաջացման գործուն միջոցների շարքը։ Փոխառությունների միջոցով հարստացող այս ուղին բարդ չէ. այն կարելի է բաժանել երեք հիմնական եղանակի։

1) Երբ փոխ են առնվում ոչ թե մեկական բառ-համանուններ, այլ ամբողջական համանունական խմբեր։ Ընդ որում, համանունական խմբի երկու անդամներն էլ փոխ են առնվում միևնույն լեզվից։ Այդ բառերը փոխատու լեզվի բառային համակարգում արդեն առանձին համանուն բառեր են, որոնք առաջացել են տարբեր աղբյուրներից և յուրաքանչյուր համանունական խումբ ունի իր առաջացման պատմությունը։

Եվրոպական լեզուներից ռուսերենի միջոցով փոխառված օտար բառերից շատերը փոխել են իրենց արտասանությունն ու ուղղագրությունը և կապվել հայերենի հնչյունական համակարգի և հնչյունափոխության հետ։ Կան համանուններ, որոնք պատկանում են նույն կամ տարբեր լեզուներին, տարբերվում են գրությամբ և արտասանությամբ, բայց ռուսերենի հնչյունական ազդեցության հետևանքով կրել են որոշ փոփոխություններ, ստացել նման արտասանություն և գրություն, այսինքն դարձել են համանուն բառեր։ Հայերենում ևս դրանք համանուն բառեր են, քանի որ հայերենը փոխ է

առել ռուսերենից: Օտար բառերը մտնելով հայերենի բառապաշարի մեջ, ենթարկվում են հայերենի բառակազմական և քերականական յուրահատկություններին: Այս հանգամանքը ևս նպաստում է համանուն բառերի առաջացմանը: Որոշ փոխառյալ բառեր ենթարկվել են փոխառու լեզվի բառակազմական կանոններին և առաջացրել բառ-համանուններ:

Միևնույն լեզվից փոխառված համանունական խմբերը շատ են ժամանակակից հայերենում: Այդ փոխառությունները կատարվել են տարբեր լեզուներից, ինչպես՝

Ֆրանսերենից

տակտ (tact) երաժշտության և տաղաչափության մեջ ժամանակի միավոր, տակտ—չափի, պատշաճության զգացում. կարինետ—cabinel մի քանի երկրներում մինիստրների կազմը, որ մտնում է կառավարության մեջ, կարինետ—աշխատասենյակ. էտապ (étape) փուլ, էտապ—որևէ տեղ աքսորվող բանտարկյալների խումբ, բանտարկյալներով լցված գնացք. կադր (cadre) որևէ հիմնարկության աշխատողների հիմնական կազմը, կադր (կինո) առանձին տեսարանների նկարահանում կինոժապավենի վրա:

լատիներենից և հունարենից

նոսա—(լատ. nota) երաժշտական ձայնանիշ, նոտա—(գիվանագիտական) հայտագիր. փաղանգ (հուն. fānax-ggos) սարգերի կարգին պատկանող միջատ, փաղանգ—զորագունդ, զորք (հուն. fānax-ggos). պոլիփյուր—(հուն. porfúra) ծիրանի, արքայական ծիրանագույն վերարկու, պոլիփյուր—(հնդ.) ծիրանաքար:

պարսկերենից

բարակ—(bārak) որսորդական շան մի տեսակ, բարակ—ոչ հաստ. մաւյան—(maïyan) գիրք, մաւյան—(կինդ.) զամբիկ, մաւյան—(պասմ.) միայն «մատյան գանդ» արտահայտության մեջ իրրեանմահների գանդ. զանն—(gānng) ոսկու, արծաթի, թանկագին իրերի ամբողջություն, զանն—եկեղեցական երգ. քոկ—(xok) խումբ, ջոկատ, քոկ—առանձին:

արաբերենից

գազել (gazel) բանաստեղծական ձև, գազել—վիթ:

2) Երկրորդ եղանակով կազմված համանունական խմբերում փոխառյալ է համանունական խմբի միայն մեկ անդամը: Այդ դեպքում փոխառյալ բառը արտասանությանը զուգադիպում է բուն հայերեն բառի հետ: Օրինակ, ռուսերենի միջոցով գերմաներենից փոխառյալ դիզել—ներքին ալյուման շարժիչ, որ աշխատում է հեղուկ

վառելանյութով բառը արտասանությամբ համընկել է հայերենի դիզել—խոտը կամ օրանը իրար վրա դարսել՝ դեզ կազմել բառի հետ, Ախորժալուռ ձայնիդ մատաղ. Ձորագէսի ուրախ դիզել (ՀԿԲ)։ Ալն երկու նորը, որի վրա խոտ էին դիզել, բերենքերան լցված էր պղնձե կաթսաներով (ԱՔ)։ Կամ ոռւսերենից փոխառյալ շինել բառը («գինվորական տաք վերարկու») հնչապես ղուզալիլիկ է հայերեն շինել— պատրաստել, սարքել, կառուցել բառի հետ։ Թիֆլիս ծառայելիս մի շինել ունեւ, այնքան պատռոտված, որ ամաշում էր հագին պրճապեկտով անցնի (ՀԹ)։ Այդ փառքը գրգռում է և մյուսներին բարի նախանձը և սկսում են բռնորդ վանքեր շինել (Բ)։

Ալդպիսի համանունական խմբերից են՝ բալ—(պարսկ. balu, alibālu) բալենու պտուղը, բալ—(բնիկ հայերեն բառ) մեզ, մշուշ. բան—(պարսկ. bān) ժառանգական, բան—(բնիկ հայերեն բառ) գործ, աշխատանք, գոլ—(անգլ. goal) (սպորտային) գնդակի անցնելը խաղադարպասով, գոլ—(հայերեն բառ) քիչ տաք, գաղջ. մարտ (հան. mértios, որ ծագում է լատ. martius բառից) մարտ ամիսը, մարտ (բնիկ հայերեն բառ) կռիվ, ճակատամարտ. մի (լատ. mi) երաժշտության մեջ ութնյակի երրորդ ձայնաստիճանը, մի (բնիկ հայերեն բառ) մեկ. տոն (ֆրանս. ton) ձայնաստիճան, տոն (բնիկ հայերեն բառ) հանդիսավոր օր. սպանդ (պահլ. spand, պարսկ. éspand, sipand) (բուսաբանական) 12 տեսակ ունեցող փեզեցնա բայսը, սպանդ (հայերեն բառ) ջարդ, կոտորած։

3) Երրորդ եղանակով կազմված համանունական խմբի երկու անդամներն էլ փոխառյալ բառեր են հայերենի համար, սակայն համանուններից մեկը փոխառված է մեկ լեզվից, մյուսը՝ մի այլ լեզվից։ Կարելի է ենթադրել, որ նման բառերը փոխառվել են պատմական տարբեր ժամանակներում, ուստի և առաջացել են համանունական խմբեր։ Օրինակ, հնագույն ժամանակներում պարսկերենից փոխառված շիշ բառը (սենդ վզով հեղուկ լցնելու ապակե աման) համընկել է միևնույն հնչյունական ձևավորումն ունեցող տաճկերենից փոխառված շիշ—շամփուր բառին։

Ալդպիսի համանուն բառերը համեմատաբար շատ չեն ժամանակակից հայերենում։ Դրանցից են՝ դարաղ (տաճ. dabag) հիվանդության անուն՝ բերանախտ, դաբաղ (արաբ. debbāg) աղաղորդ. գազ—(պարսկ. gāz) բոժոժից ստացված մետաքսը, որից թել են պատրաստում, գազ—(պարսկ. gāz) կանգուն, երկայնության պարսկական չափ, գազ—(ֆրանս. gaze) նուրբ և թափանցիկ կտոր մետաքսից, վուշից և ալլն, գազ—(գերմ. gas) (ֆիզ. և քիմ.) օդանման մարմին։

Հայերենի զարգացման ընթացքում անընդհատ առաջացել և առաջանում են համանունական խմբեր, Եթե փոխառյալ համանուն բառերից մեկը որևէ պատճառով դժվարություն է ստեղծում խոսողի համար, ապա դա կարող է դառնալ համանունական խմբի քայքայման պատճառ։ Հայերենում համանունական խմբի քայքայման հիմնական պատճառը համանուն բառերից մեկի հնանալն է և գործածական բառապաշարից դուրս գալը։ Հայերենի փաստերը ցույց են տալիս, որ մեր լեզուն ավելի շատ հարստացել է համանուն բառերով, քան «ազատվել» դրանցից։ Այդ ես համոզում է, որ թեև լեզվում համատեղ գործում են հաղորդակցական և արտահայտչական ֆունկցիաները, քայց լեզվի համար ամենակարևորը հասարակական-հաղորդակցական ֆունկցիան է։ Դրա համոզիչ փաստարկներից մեկն այն է, որ ինչպես այլ լեզուները, այնպես էլ հայերենը, չի ձգտում թոթափվել համանուն բառերից։ Այստեղից ևս կարելի է ենթադրել, որ համանուն բառերը «հիվանդագին» երևույթ չեն ինչպես մնացած լեզուների, այնպես էլ հայերենի համար։

Քերականական ձևերից առաջացած համանուններ

Բացի համանունների առաջացման հիմնական աղբյուրներից, կան նաև լրացուցիչ աղբյուրներ։ Երբեմն դրանք սահմանափակվում են մեկ կամ երկու օրինակով։ Չանդրադառնալով եղակի օրինակներին, բնութագրողից դուրս չպետք է թողնել այն համանուն բառերը, որոնց առաջացումը պայմանավորված է բերականական պատճառներով։

Հայերենում կան մի քանի համանուն բառեր, որոնք առաջացել են բառի հոլովական ձևերից. օրինակ՝ մեկից մակբայը առաջացել է մի (մեկ) անորոշ ղերանվան բացառական հոլովի ձևից, անկախացել է իրրև ինքնուրույն բառ, ձեռք է բերել բառական արժեք։ Ժամանակակից հայերենում այդ մակբայը մասնակի համանունական հարաբերության մեջ է մտնում մի (մեկը) ղերանվան բացառական հոլովաձևի հետ, այսինքն՝ մեկից։—միանգամից և մեկից2—մի (մեկը) ղերանվան բացառական հոլովաձևը մասնակի համանուններ են։ Իսկ ինչպիսի՞ն են լինում ուսանողները. ինչպիսի՞ն, դժվար է մեկից ասել (մամուլ)։ Տատիկն անդադար դիմում էր մեկից դեպի մյուսը (Բ)։ Համանունական խմբի առաջին անդամը այլևս հարացուցային շարքի անդամ չէ, ընդհանրապես հոլովման ենթակա չէ, ուստի -ից-ը նրա հոլովական վերջավորությունը չէ, Համա-

նունական խմբի երկրորդ անդամի -ից-ը այդ բառի հոլովական վերջավորությունն է, արտահայտում է հոլովական իմաստ, հարացուցային շարքում հակադրվում է հարացույց կազմող անդամների հոլովական վերջավորություններին:

Կան մի քանի համանուն բառեր, որոնց առաջացման աղբյուրը գրաբարն է: Օրինակ, գրաբարի հոգնակի սեռական-տրական հոլովից են ծագում -ոց հոլովական ձևով վերջացող մի շարք բառեր, որոնցից մի քանիսը գտնվում են համանուն բառերի շարքում: Այդ դեպքում համանուն բառերից մեկը, սովորաբար հնացած կամ հազվադեպ է ժամանակակից հայերենում և շնայած շատ քիչ է կիրառվում ակտիվ բառապաշարում, բայց գործածական է պասիվ բառապաշարում: Այդպիսին են օրինակ պանոց—պահելու տեղ և պանոց—պասի, պաս պահելու համանուն բառերը: Գետնախնձորը կարելի է ուտել պանոց օրերում (Ր): Թաղել էին գեանի տակ ստոբրկոյա պանոց(ներում), փոսերում, ճորերում (մամուլ):

Այդպիսի համանուններից են՝ մեկնոց—վրայից հազնելու կամ ծածկելու զգեստ, վերարկուի մի տեսակ, մեկնոց—մեկ ուրլիանոց. ֆաղոց—հայկական տոմարի 5-րդ ամիսը (դեկտեմբեր), ֆաղոց—հունձ. վերնոց—տան վերևի վանդակապատ մասը, վերնոց—վերնազգեստ:

Որոշ համանուն բառեր առաջացել են եզակի սեռական հոլովի ձևից: Օրինակ՝ գրաբարյան ելումն բառի եզակի սեռական հոլովաձևը իմաստային տարբերակմամբ երկփեղկվել է երկու համանուն բառերի. ելման₁—հորդացած, վարարած և ելման₂—ելնելու, դուրս գալու, ելակետային: Արագը ծով, Արագն ելման, դուրս էր եկել իր ավերից (ՀԹ): Տանկերից մի ֆանիսը շեշտակի կրակից վառվեցին՝ դեռևս չկարողանալով դուրս գալ էլման դիրֆերից (ՍԽ):

Համանուն բառեր են առաջանում խոսքի մասերի փոխանցման շնորհիվ: Խոսքի մասերի փոխանցման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ տվյալ բառը կամ բառաձևը ենթարկվում է իմաստային փոփոխության, բայց չի փոփոխվում բառակազմական կամ ձևական տեսակետից: Իր նախկին իմաստից հեռացած բառը կամ բառաձևը վերածվում է այլ խոսքի մասի: Եվ դրա արդյունքը լինում է այն, որ առաջանում է նոր բառ, բառարանային ինքնուրույն միավոր: Չանդրադառնալով խոսքի մասերի փոխանցման զանազան տիպերին ընդհանրապես, մենք խոսում ենք միայն փոխանցման այն տիպի մասին, որը պատճառ է դառնում համանուն բառերի առաջացմանը: Դա մեծ մասամբ լինում է այն դեպքում, երբ բառը

կամ բառաձևը ստանում է նոր իմաստ և այդ նոր իմաստով անկախանում, ստանում ուրիշ խոսքի-մասային իմաստ, իսկ նախկին իմաստը մնում է իր հին խոսքի-մասային պատկանելիությամբ: Օրինակ, համար բառը որպես կապ և որպես գոյական շատ գործածական է և՛ գրական հայերենում, և՛ բարբառներում: Համար բառը որպես գոյական հին մատենագրության մեջ ուներ շատ իմաստներ՝ ազումար, հաշիվ, հաշվելը, քննություն, հարց ու փորձ, բանի տեղ զենելը, համեմատություն, ենթադրություն¹⁹: Այս բառից է ծագում ժամանակակից հայերենում գործածական համարել բայը (գրաբարում՝ համարիլ): Համար գոյականից համար կապի առաջացումը սկսվել է դեռևս գրաբարում, բայց համեմատաբար քիչ է գործածվել և հանդիպում է միայն ի նախորդի հետ: Հմմտ. ի համար քեռ իւրոյ (հորենացի). նշանակում է վասն. պատճառով: Սա վկայում է, որ համար կապը առաջացել է համար գոյականից, առանց ձևական փոփոխության՝ միայն նյութական իմաստի կորուստով և սպասարկու բառի վերածվելով:

Ժամանակակից հայերենում խոսքի մասերի փոխանցման շնորհիվ այդպիսի անկախ բառեր են առաջացել բայի դերբայական ձևերից: Օրինակ՝ կարող, — զորավոր և կարող — դերձակ համանուն բառեր են: Կուզեի լինել հաստատ ու կարող, Աշխարհը զգալ որպես ֆաղցր լող... (ԾԶ): Ուզում եմ էս կտավիցը թագավորի համար շապիկ կարեն, բայց էնպես կարող չեմ գտնում, որ կարի (ՀԹ): Համանուն այս բառերը սռաջացել են ենթակայական դերբայի ձևերից, թեև այժմ բայերի անորոշ դերբայները համանուն չեն. առաջինը առաջացել է գրաբարյան կարել — կարողանալ բայի ենթակայական դերբայից, որի սնորոշը այլևս չի գործածվում ժամանակակից հայերենում, իսկ երկրորդը՝ կարել — կար անել բայի ենթակայական դերբայից, որն այժմ էլ գործածական է: Այս համանունները -ող մասնիկով ձևավորված անկախ բառույթներ են, որոնցից առաջինը պատկանում է ածականի, իսկ երկրորդը՝ գոյականի քերականական կարգին:

Խոսքի մասերի փոխանցման շնորհիվ համանուն բառեր են առաջացել հատկապես հարակատար և ենթակայական դերբայների ձևերից: Որոշ բայերի հարակատար և ենթակայական դերբայների ձևերը, փոխանցվելով գոյականի և ածականի, անկախացել են որպես բառական ուրույն միավորներ, իսկ նույն դերբայական ձևերը պահպանվել են բայի համակարգում՝ որպես հարակատար և ենթա-

19 Չ. Աճառյան, Արմատական բառարան, հ. III, էջ 63:

կայական դերբայների ձևեր, որպես՝ հարացուցային շարքի անդամներ, Հանրահայտ է գրող գոյականի առաջացման պատմությունը։ Այգ բառը լրիվ համանունական հակադրություն է կազմում գրող—երևակայական շար ոգի բառի հետ և մասնակի համանունական հակադրություն՝ գրող՝ գրել բայի ենթակայական դերբայի հետ։ Գրաբարում գիր բառը բազմիմաստ էր և նշանակում էր՝ «1. տառ, 2. գրվածք, գրություն, 3. նամակ, 4. Աստվածաշունչ, 5. որևէ գիրք, մատյան»։ Գիր գոյականից ծագում է գրել բայը, որի ենթակայական դերբայը անկախ էր դարձել դեռևս գրաբարում։ «Դրող, իբր գրիչ-պիր-քերական. Յուլվ գտանես գրող և նարտասան և ոչ մի իմաստներ» (ՆՀԲ, հ. 2, էջ 588)։ Այժմ այս իմաստը հնացած է և գրող նշանակում է «գրական ստեղծագործությամբ զբաղվող անձ»։ Արդյիսի համանուններ են նաև սիրող՝ սիրել բայի ենթակայական դերբայը և սիրողը—գիտություն կամ արվեստով զբաղվող այն անձը, որը շուտի մասնագիտական պատրաստություն և սխտեմատիկ կրթություն» (dilettante)։ Վերջինս ծագել է առաջինից, կայունացել է առ իմաստով, ձեռք բերել գոյականի իմաստ։ Համոզվելու համար համեմատենք հետևյալ օրինակները.

սիրող՝ սիրել բայի ենթակայական դերբայը՝

Եվ սիրող երկինքն ավելի վառված,
Գիշերվա բոլոր զուխով զարդարված,
Փռում է իրեն բոլոր վառները (ՀԹ),
էնտեղ իր բարի, սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում (ՀԹ)։

սիրող՝ գոյական, անկախ բառ՝

Մեծապատիվ պարոն Ներսես Բեյ, Գորիսի հայոց ծխական դպրոցի սիրող-սիրողների խումբը խնդրում է Ձեզ Ձեր ներկայությամբ պատվել թատերական հանդեսը (ԱԲ), Հին դերասան Գևորգի պարոն Սարգսյանը սիրողներին ուժիսյություն էր անում (ՕԳ), Մոներեալ ֆաղափում (Կանադա) Մամիկոնյան մշակութային հանձնախումբը կազմակերպել է սիրող հայ նկարիչների ցուցահանդես (մամուլ)։

Ենթակայական դերբայի խոսքի-մասային փոխանցումներից են առաջացել նաև ընթերցող—գրադարանից օգտվող, ֆերթող—բանաստեղծ, առաջնորդող—թերթերի, ամսագրերի խմբագրական՝ ուղություն տվող (հղված), ընտրող—ընտրության մասնակից, մտածող—խոր, փիլիսոփայական մտածողության տեր անձնավորություն և այլ բառեր, որոնք համանունական հարաբերության մեջ են

մտնում համապատասխան բայերի ենթակայական դերբայների հետ²⁰,

Հարակատար դերբայի խոսքի-մասային փոխանցումներից առաջացել են մի քանի գոյականներ և ածականներ: Համեմատության համար բերենք խորոված գոյականով և խմած ածականով օրինակներ, որտեղ պարզ երևում են դրանց համանունական հակադրությունները խորովել և խմել բայերի հարակատար դերբայների հետ²¹,

Հարակատար դերբայ

«Ամպերը դաճող ուղտերի նման

Նոր են քուր խմած ձորից բարձրացում» (ՀԹ):

Ինքնուրույն բառ

Իսկույն նկատեցի որ խմած է (ՆԴ):

Հարակատար դերբայ

Նա վեր առեց խորոված շագանակների մի-մի հատ և մոտեցրեց նրանց քերանին (Ր): Փորձի համար խորոված տեղից կերա (ԱՀ):

Ինքնուրույն բառ

Ուտելու համար բավական նեղություն է տվել իրեն: Խորոված անելու ժամանակ է (ՀԹ): Երկու մյուս անձանքները, որոնք խառնուկի մոտ խորոված էին պատրաստում, ամենևին չշարժվեցին իրենց տեղից (Ր):

Հայերենում պատահում են մի երկու համանուն բայեր, որոնց իմաստային կողմի ուսումնասիրությունը մեզ համոզում է, որ բայի սեռային տարբերակումները առաջ են բերել իմաստային տարբերակումներ. սրանք կայունացել են իրենց տարբեր իմաստներով և

20 Այս բառերից մի քանիսն արդեն որպես բառարանային ինքնուրույն միավորներ տրվել են «Ժամանակակից հայերենի բացատրական բառարան»-ի I հատորում: Սակայն պակասում է բացատրման ձևերի միօրինակությունը: Օրինակ՝ գրող հնչյունակազմով բառերին հատկացված է երկու բառահոլոված: Գրողը — դրական գործունեությամբ զբաղվող, ղեկավարվող ստեղծող անձ և գրող — Երևակայական չար ոգի, հոգեառ հրեշտակ: Ընդ որում, առաջին բառահոլովածում, որպես երկրորդ իմաստ, տրված է՝ ենթակայական դերբայ զբոլ բայի նման բառերի բացատրման ժամանակ, բառարանային սկզբունքներից ելնելով, սովորաբար չեն տրվում բայի դերբայական ձևերը:

21 Որպես լեզվաբաններ համանուններ են համարում նաև կրկնակի խոսքի-մասային պատկանելիություն ունեցող բառերը, պատճառարանելով, որ դրանց տարբերությունը քերականական է, քանի որ պատկանում են սարբեր խոսքի մասերի: Այս անսակետը հիշտ չէ: Ինչպես արդեն նշել ենք, համանունական հակադրությունները պետք է որոշել ելնելով ոչ թե բառերի խոսքիմասային սլատկանելիությունից, աչլ դրանց բառական անկախ իմաստներից:

վերածվել համանուն բառերի Այս երևույթը մանրամասն ուսումնասիրել է Ա. Աբրահամյանը²²։

Նման ճանապարհով առաջ եկած համանուն բառերից են՝ շրջելի—քալելի, զբոսնելի, թափառելի և շրջելի—շուռ տալ, մեկնելի—հեռանալ, ուղևորվել և մեկնելի—մեկնաբանել, բացատրել։ Այս բառերի համանունացումը կատարվել է շատ վաղուց։ Դրանք ժամանակակից հայերենում ևս պահպանել են իրենց սեռային տարբերությունները։ Առաջինները չեզոք սեռի բայեր են, իսկ երկրորդները՝ ներդրածական։ Բերենք մի քանի օրինակ։ Դավիթն այստեղ հոգեկորոհ հետ շրջեց երկար ու երկար (ՄԽ)։ Դո՛ւնապանը երեսը մի կողմ շրջեց... (ԱԲ)։ Մարդիկ օդի մեջ են շրջում։ մի վայրկյան կտեսնե՞ք նրանց Թավրիղում, իսկ մի վայրկյանից հետո՝ Հնդկաստանում (Բ)։ Մեկնում էր Մեսրոպ Վարպետը կլորիկ գրքերի իմաստը (մամուլ)։ Ես հիմա մեկնում եմ Թիֆլիզ (ՀԹ)։

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հայերենում քերականական պատճառները ևս կարող են նպաստել համանուն բառերի առաջացմանը։ Դա լինում է այն դեպքում, երբ քերականական ձևերը բառացվում են։ Բառացման են ենթարկվում այն քերականական ձևերը, որոնց ձևական ցուցիչը առաջ է բերում իմաստային ինքնուրույնություն և վերածվում բառային միավորի։ Այս դեպքում տեղի է ունենում իմաստափոխ տեղաշարժ, որն արտահայտվում է ձևական ցուցիչի իմաստի ստացմամբ։

Այժմ դիտենք հայերենի համանուն բառերի առաջացման պատկերը՝ նրանց ակտիվությունը ցուցադրող աղյուսակում։

Համանուն բառերի առաջացման աղբյուրները	Համանուն բառերի առաջացման աղբյուրների ակտիվությունը տոկոսային հարաբերությամբ
Բառակազմության միջոցով	45,3%
Պատահական զուգադիպությունների միջոցով	36%
Իմաստափոխության միջոցով	7,4%
Փոխառությունների միջոցով	6,7%
Հնչյունական փոփոխությունների հետեանքով	2,3%
Քերականական ձևերից	2,3%

Ինչպես տեսնում ենք, համանուն բառերի առաջացման ուղիները, որոնց քննությունն ունի բառադիտական-բառարանագրական

²² Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գ. I, Երևան, 1962։

կարևոր նշանակություն, հայերենում բավական բազմազան են: Այդ բազմազանությունն ամենից առաջ արտահայտվում է համանուն բառերի առաջացման աղբյուրների տարբեր արդյունավետությամբ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ — Ակսել Բակունց	ՄԽ — Մկրտիչ Խերանյան
ԱԻ — Ավետիք Իսահակյան	ՆԶԲ — Նոր բառագիրք հայկազեան լեզուի
ԱՍ — Անահիտ Սեկոյան	ՆԴ — Նար-Դոս
ԱՔ — Աճառյան	ՊՊ — Պերճ Պոռչյան
ԳԳԱ — Գ. Գրձելյան, Այգեգործություն	ՊՍ — Պարույր Սևակ
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան	ՌՌ — Ռուբեն Ռրերյան
ԻԶ — Իզիշ Զարենց	ՍԿ — Սիլվա Կապուտիկյան
ՀԹ — Հովհաննես Թումանյան	ՍՀԾ — Սուրխաթյան, «Հոմերոս—Շեքսպիր»
ՀԿՐ — Հսկոր Հակոբյան	ՎԽ — Վիգեն Խենյան
ՀՀ — Հովհաննես Հովհաննիսյան	ՎՓ — Վրթանես Փախազյան
ՀՔ — Հրաչյա Քոչար	Բ — Բաֆֆի
ՂԱ — Ղազարոս Աղայան	ՕԿ — Օլգա Կուլազյան
Մ — Մուրացյան	
ՄՏ — Մարտիկյան, Տնարարություն	